

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ԶԼԱՏՄԱՆ ԲԱՆԱԶԵՐԸ

ԱՆԻ ՄԱՀԱԿԵԱՆ

Դեռ տարին չմեկնարկած՝ «Քաղաքացիական Պայմանագիր»-ը, որն առաւել յայտնի է որպէս Նիկոլ Փաշինեանի կուսակցութիւն, հանդէս եկաւ համամասնական ցուցակները կազմման մեխանիզմների վերաբերեալ յայտարարութեամբ:

Հարցը, ինչպէս հասկանալի դարձաւ, քննարկման նիւթ էր դարձել Յունուարի 9-ին հրաւիրած քաղաքացիական նիստում, որտեղ կուսակցութիւնը կայացրել էր մի շարք որոշումներ, որոնցից առաւել ուշադրաւ հետեւեալն է՝ «ՔՊ անդամ չհանդիսացող անձինք չեն կարող առաջադրուել կուսակցութեան համամասնական ցուցակում ընդգրկուելու համար: Կուսակցութեան համամասնական ցուցակում ընդգրկուելու համար կարող են առաջադրուել մինչեւ 2016 թվականի Դեկտեմբերի 31-ը կուսակցութեանն անդամագրուած անձինք»:

Նախ ի սկզբանէ նման հարցն էր բերում Նիկոլ Փաշինեանը միանշանակ չընկալուեց, յատկապէս որ քաղաքական օրակարգի թիւ մէկ հարցերից մէկը ինչպէս տարուայ մեկնարկին, հիմա նոյնպէս, շարունակում է մնալ Ընտրական Օրէնագիրքը: Իշխանութիւնը նպատակ է դրել փոխել այն, աւելի ճիշդ՝ նորը կազմել, որը վճռորոշ դերակատարում է ունենալու քաղաքական առաջիկայ գործընթացների, բնականաբար, ընտրութիւններում ելքի հարցում:

ՔՊ-ն այս հարցը քննարկելու փորձարկել նկատելի շտապողականութեամբ լուծում տուեց ցուցակներ կազմելու խնդիրն: Ուշագրաւ է յատկապէս այն իրողութիւնը, որ կուսակցութեան որոշման մէջ ոչինչ չի սուտում, այլ կուսակցութիւնների հետ դաշինքներ կազմելու հաւանականութեան մասին:

Առաջին հայեացքից տպաւորութիւն է ստեղծուում, որ նպատակ է դրուել հզոր կուսակցութիւն ձեւաւորել ու որոշումն էլ

գուտ կուսակցաշինութեան, հզորացման խթան է հանդիսանալու:

Գաղտնի չէ, որ Նիկոլ Փաշինեանը քաղաքական ներկայակուց աչքով եզակի գործիչներին է Հրանդ Բազումեանի, Զարուհի Փոստանջեանի շարքերում գտնուող, որը հանրային որոշակի դերական ընկալում ունի ու ունի պոտենցիալ յաջորդ ընտրութիւններում յատկապէս էլեկտորատի տնօրինելու: Եւ նոյնիսկ անկախ, «օրում կախուած» ու իշխանութեան որոշակի թեւերի հետ ունեցած համագործակցութեան մասին Փաշինեանին հասցէագրուած լուրերի մասին, ինչպէս ինքը կասէր, կարողացել է յատկապէս վարկանիշ ձեւաւորել ու արժանանալ լայն զանգումների համակարաններին, որի ձեւաւորման հարցում, ի դէպ, յատկապէս ազդեցութիւն է թողել նաեւ նախկին ընդդիմադիրների անհաշուեցնում ու անհեռանկարային գործողութիւնները, իշխանութեան թեւի տակով անցնելու իրողութիւնը:

Ենթադրուում էր, որ Փաշինեանը հանդէս կը գար ընդդիմութեան համախմբման, կոնսոլիդացման, համատեղման քայլերով, որին իր կարգավիճակը փաստացի թոյլ է տալիս, մինչդեռ եղաւ հակառակը, որի վկայութիւնը վերոնշեալ որոշումն է՝ կուսակցական չհամարուող անձինք տեղ չեն ունենայ ՔՊ-ում, իսկ դաշինքների մասին դեռուս ոչ մի խօսք:

Գաղտնի չէ, որ նորանկախ Հայաստանի ընտրական պատմութեան ընթացքում ընդդիմութեան ձախողումների զլխաւոր պատճառները մէկը համարուել է անջատ-անջատ դրսեւորումը, երբ ամբիջիանները գերիշխել են ընդհանուր նպատակին ու ջլատուել ամենահաւանական թուացող դաշինքները: Նորաստեղծ կուսակցութիւնն անցեալից դասեր քաղելու փորձարկել, ի սկզբանէ գծում է ընդդիմութիւնը ջլատելու իր բանաձեւը՝ արդեօք իր ձեռքում, թէ ուրիշների, որոնց ձեռնտու է: «ՀԱՅԵԼԻ»

ԱՅՍՕՐ ՄՏԱԾԵՆՔ ԿԱՂՈՒԱՅ ՄԱՍԻՆ

ԱՐՄԻՆԷ ՕԶԱՆԵԱՆ

Մամուլէլ կարապետեանը որոշել է արցախցիները ընտանիքներում ծնունդ իւրաքանչիւր չորրորդ երեխային միանուագ 5 հազար դոլար նուիրել:

Չգիտեմ, թէ քանի ընտանիք նման հերոսական որոշում կը կայացնի այս բարձր ժամանակներում չորրորդ երեխան ունենալու մասին, սակայն, անշուշտ, քայլը ողջունելի է: Երբ պետութիւնն ի վիճակի չէ սոցիալական ակտիւ քաղաքականութիւն վարել եւ դեմոգրաֆիական խնդիրների մասին հոգ տանել, պէտք է անհատներն իրենց վրայ վերցնեն այդ գործը: Թէեւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնում որոշակի քայլեր արոււմ են այդ ուղղութեամբ, ասենք՝ առաջին երեխայի ծննդեան դէպքում ծնողներին յատկացուած է 100 հազար դրամ, երկրորդ երեխայի դէպքում՝ 200, երրորդ՝ 500, չորրորդ եւ իւրաքանչիւր յաջորդ երեխայի դէպքում՝ 700 հազար դրամ: Իսկ ամուսնութիւնը գրանցողը գոյգերին, որպէս ամուսնութեան նպաստ, 150 հազար դրամ միանուագ գումար է յատկաց-

ւում: Սակայն նոր կազմուող ընտանիքները եւ յատկապէս նորածին ունեցողները կը վկայեն, որ այս գումարները բաւարար չեն նորմալ կենսամակարդակ ապահովելու համար: Միայն երեխայի տակ դիրների վրայ ամսական ահաւոր գումարներ են ծախուում: Իսկ ասել անապահովներին, որ նախնադարեան եղանակներով խնամէք ձեր փոքրիկին՝ առանց «փամփերսներին», անիմաստ է ու անմարդկային:

Ժամանակները փոխուել են, եւ մարդիկ ուզում են հնարաւորինս հեշտ ու յարմարաւէտ ապրել: Եթէ եւս մէկ երեխայ ունենալը նրանց պէտք է գրկի կեանքի որոշակի բարիքներից, ապա ընտրութիւնը հաստատ կատարուելու է յօգուտ բարիքների, այլ ոչ թէ յօգուտ երեխայ ունենալու: Այնպէս որ, եթէ մենք ուզում ենք մէկերկու տասնամեակ յետոյ չկանգնել դեմոգրաֆիական ճգնաժամի առաջ, որն իր հերթին կը բերի տնտեսական ու սոցիալական իտրեմ ճգնաժամի, պէտք է լրջօրէն մտածենք ծնելիութիւնը խթանելու մասին: «ՀՐԱՊԱՐԱՎ»

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՄ

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութիւնը 800 հազար տոլար դրամաշնորհ է յատկացրել Հայաստանի կառավարութեանը կոռուպցիայի դէմ պայքարի համար: ԱՄՆ պատասխանատուները բազմիցս նշել են այդ պայքարի կարեւորութիւնը եւ դրանով պայմանաւորել Հայաստանում ներդրումների հնարաւորութիւնը եւ երկրի անվտանգութիւնը:

Կոռուպցիայի դէմ պայքարը որպէս պայման դրուած է ՀՀ իշխանութեան առջեւ: Ընդ որում, ի տարբերութիւն նախորդ ժամանակաշրջանների, այս փուլում նկատելի է արեւմտեան կառույցների հետեւողականութիւնն այս հարցում: Նկատելի է նաեւ, որ Հայաստանի առջեւ ցանկացած հարց այդ կառույցները պայմանաւորում են կոռուպցիայի դէմ պայքարով:

Ընդհանրապէս, տպաւորութիւն է, որ դա վերջնագիր է Հայաստանի իշխանութեանը: Եւ դա արտապայտուած է իշխանութեան գործողութիւններում: Ներիշխանական պայքարը ներկայումս ենթարկուած է հենց այդ տրամաբանութեանը: Հասկանալի է, որ կոռուպցիայի դէմ պայքարն ակնյայտօրէն լինելու է ընտրովի, քանի որ կոռուպցիայով է որջ համակարգը: Նոյն արեւմտեան կառույցները բացառապէս յայտարարել են, որ «կառավարութեան անդամների շրջանում լայն տարածուած է կաշառակերութիւնն ու նեպոտիզմը (հարազատներին ու մերձավորներին պաշտօններ բաժանելն ու արտօնութիւններ տրամադրելը), որոնք հազուադէպ են օրինական հետապնդման ենթարկուած պաշտօնը շարաշահելու համար»:

Դա նշանակում է, որ արեւմտեան շահագրգիռ կառույցները որեւէ պատրանքներ չունեն եւ հիանալի գիտեն Հայաստանի իշխանութեան բնոյթն ու մոտիւրացիան: Միւս կողմից, այդ իշխանութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան արդիւնքում Հայաստանը յայտնուել է քաղաքական ու տնտեսական աղէտի եզրին, եւ ստեղծուել է մի իրավիճակ, երբ ալիքը հասել է հենց իշխանութեանը: Հենց այս հանգամանքը կարող է դառնալ իւրատեսակ խթան՝ գործընթացն ինչ որ հանգրուանի հասցնելու համար:

Արեւմուտքը ներկայումս խնամքի տակ է վերցրել Հայաստանը եւ թոյլ չի տալիս նրա սոցիալ-տնտեսական փլուզումը, միաժամանակ ստեղծելով մի իրավիճակ, երբ այլ ելքեր չեն թողնուել մասնաւոր եւ ժամանակ ձգելու համար: Արեւմուտքը «ճանաչեց» Սահմանադրութեան հանրաքուէն, այսինքն՝ քրեա-օլիգարխիկ նախկին պայմանագրի լուծարումը, որի արդիւնքում ստեղծուել է նոր իրավիճակ, երբ կարելի է սկսել «նոր ջջից»: Եւ իշխանութեանը փաս-

տացի տրուել է այդ «շանսը»: Եւ ոչ միայն իշխանութեանը, այլեւ միւս քաղաքական ուժերին՝ կոռուպցիայի դէմ պայքարելու եւ ընտրական համակարգը բարեփոխելու համար:

Նկատելի է սակայն, որ այդ կապակցութեամբ էլ առանձնապէս ակնկալիքներ չկան, սակայն պահոււմ է դիւանագիտական պատշաճութիւնը: Բանն այն է, որ եթէ կայ որոշում Հայաստանի կապակցութեամբ, ապա խնդիրները լուծուելու են նաեւ առանց հայկական քաղաքական ուժերի մասնակցութեան:

ԱՄՆ դեսպանը կոռուպցիայի դէմ պայքարի դրամաշնորհ տրամադրելուց առաջ յայտարարել էր, որ եթէ արդիւնքներ չլինեն, օժանդակութիւնը կը դադարեցուի: Մի-ստամանակ, Սահմանադրութեան հանրաքուէից յետոյ դեսպանը չէր բացատրել ընտրակեղծիքների մասնակցների հանդէպ պատժամիջոցները: Հանրաքուէն կեղծուել է ամենաբարձր մակարդակով, եւ այս հարցում նոյնպէս պատրանքներ չկան:

Միջազգային ներկայիս զարգացումների տրամաբանութիւնը բնութագրուում է «հասցէական» պատժամիջոցներով բոլոր նրանց դէմ, ովքեր փորձում են մակաբուծել միջազգային միջոցների ու սեփական ժողովուրդների հաշուին, ինչպէս նաեւ նրանց դէմ, ովքեր դէմ են գնում նոր աշխարհակարգի ձեւաւորման տրամաբանութեանը:

Հայաստանի անվտանգութեան ու քաղաքականութեան ամենամեծ սպառնալիքը ներկայիս տնտեսա-քաղաքական համակարգն է: «ԼՐԱԳԻՐ»

Մասիս ՇԱԲԱԹԱԾԵՐՔ
ՊԱՏՏՕՆԱԹԵՐՔ
ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԾԵՐՔ
ՊԱՏՏՕՆԱԹԵՐՔ
ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԾԵՐՔ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com
(MASSIS Weekly)
Published Weekly Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները Կստանանք Վստահեցէ՛ք «Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680
massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նոր Հայաստան»-ը ԵՒ ԶԱԿ-ը Բանակցում ԵՄ Մարտի 1-ին Միասնական Հանրահավաք Անցկացնելու Շուրջ

«Նոր Հայաստան»-ը սկսեց բանակցությունները «Հայ Ազգային Գոնկրէս»-ի հետ՝ Մարտի 1-ին միասնական հանրահավաք անցկացնելու օրակարգով: Հանդիպումից յետոյ «Հիմնադիր Խորհրդարան»-ի նախագահ Գարեգին Չուգասովեանը չբացատրեց ընդդիմադիր երկու ուժերի նոյն հարթակ բարձրանալը:

«Բանակցությունները չեն աւարտուել, ընթացքի մէջ են: Մարտի 1-ի շուրջ դիրքորոշումներն էինք քննարկում, եւ որեւիցէ բան չեմ բացառում», - ասաց նա: Քաղաքապետարան իրազեկում են ներկայացրել թէ՛ ՀԱԿ-ը եւ թէ՛ «Նոր Հայաստան»-ը, առաջինը՝ Գոնկրէսը: Ըստ «Հաւաքների ազատութեան մասին» օրէնքի՝ եթէ կա երկու հաւաքների մասնակցների բախման վտանգ, ապա քաղաքային իշխանութիւնները աւելի ուշ դիմած ուժին՝ տուեալ դէպքում «Նոր Հայաստան»-ին պէտք է պայմաններ առաջադրեն: «Քաղաքապետարանը պէտք է ընդամենը հետեւի օրէնքին», - ասաց ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Չուրաբեանը:

Չուրաբեանը պնդում է՝ մինչեւ այսօրուայ բանակցությունները միայն մամուլից է տեղեկացել, որ

Ժիրայր Սէֆիրեանի եւ Բաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորած ուժը առաջարկել է միասնական հանրահավաքի օրակարգ՝ քաղաքապետարաններին ազատ արձակելու, «Մարտի 1»-ի մեղաւորներին եւ սահմանադրական հանրաքուէն կեղծողներին պատժելու պահանջներով:

«Մեզ համար խնդիր չկայ: Մենք մեր ծրագիրը ունենք, անում ենք էն, ինչ արել ենք ուժ տարի շարունակ: Մենք աւանդաբար միշտ անցկացրել ենք Մարտի 1-ի հանրահավաքը: Մեզ համար, իհարկէ, անհասկանալի է, թէ ինչու պէտք է գուցահեռ լինեն այլ դիմումներ», - ընդգծեց Չուրաբեանը:

Գարեգին Չուգասովեանը լատենտութեամբ էր թաքցնում միասնական հանրահավաքի հնարաւորութեան մասին. այս օրերին «Նոր Հայաստան»-ը հանդիպումներ է անցկացնում նաեւ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան հետ, որի առանցքային գործիչներն է Նիկոլ Փաշինեանը: Փաշինեանին դեռ Դեկտեմբերին անձամբ Ժիրայր Սէֆիրեանն էր կանչել հրապարակ: Ընդդիմադիր պատգամաւորը, սակայն, իշխանափոխութեան ճանապարհային քարտէսի բացակայութեան պատճառաւնութեամբ չմիացաւ շարժմանը:

Փոստանջեան.- «Մենք Չպէտք Ե Ունենանք Քաղաքական Հայեացքների Համար Բանտախցում Մարդիկ»

«Մենք չպէտք է ունենանք քաղաքական հայեացքների համար բանտախցում մարդիկ, իսկ մենք այսօր ունենք: Առաջինը պէտք է անդրադառնանք այն բոլոր բողոքներին, որոնք վերաբերում են մեր՝ քաղաքական հայեացքների համար հետապնդող անձանց»: Այդ մասին «Կիրակնօրեայ Վերլուծական Թամարազեանի հետ» հաղորդման ժամանակ ասաց «Ժամանակ» խմբակցութեան պատգամաւոր Ջարուհի Փոստանջեանը՝ ի պատասխան հարցի, թէ որը կը լինի առաջին քայլը, եթէ ընտրութիւն իրաւունքների Պաշտպանի պաշտօնում:

Նրա խօսքով, եթէ նոյնիսկ յայտարարուէր, որ Հայաստանը չունի քաղաքական հայեացքների համար բանտարկեալներ, դա լոկ յայտարարութիւն է: «Երբ որ մեր քաղաքացիները դնում են Եւրոպայի ու աշխարհի ապստամբ ինդրում, նրանք ներկայացնում են հիմնաւորումներ, եւ նրանցից շատերը հենց ստանում են քաղաքական հայեացքների համար որպէս հետապնդող կարգավիճակ, եւ սրանք ապացուցուած են, այնպէս չէ, որ ես ուղղակի ասում եմ: Այս գործերը վաղը հասնելու են Մարտի 1-ի իրաւունքների Եւրոպական Դատարանը Հայաստանի Հանրապետութեանը պատժելու է, եւ հենց այս տեսանկիւնից միայն մենք պէտք է ամէն ինչ անենք, որպէսզի թոյլ չտանք, որ բանտախցում լինեն իրենց քաղաքական հայեացքների համար անձինք», - ասաց Փոստանջեանը:

Պատգամաւորը նշեց, որ երկրորդ կարեւոր քայլով պէտք է անդրադարձ կատարուի բանակում տեղի ունեցած սպանութիւններին: «Որովհետեւ մենք ինքիր



Պատգամաւոր Ջարուհի Փոստանջեան

ուսանք: Այսօր հաշուի առնելով նաեւ այն հանգամանքը, որ մենք, ըստ էութեան, պատերազմի մէջ ենք, եւ բանակը շատ կարեւոր նշանակութեան ինստիտուտ է, մենք այնտեղ պէտք է ունենանք կարգուկարոն: Այս երկուսը շատ կարեւոր են, իհարկէ՝ նաեւ միացած բոլոր հարցերը՝ ընտրական օրէնսդրութիւնից սկսած, ընտրական իրաւունքների խախտումներ եւ այլն», - ասաց Փոստանջեանը:

Հարցին, թէ ինչպէ՞ս է պատրաստուում օգնել հասարակ քաղաքացուն, ով ամենօրեայ կեանքում, կենցաղում ենթարկուել է ճնշումների, պատգամաւորը պատասխանեց. - «Բոլոր ինքիւրները իհարկէ պէտք է լինեն ուշադրութեան կենտրոնում: Քաղաքացու կողքին պէտք է կանգնած լինի մարդու իրաւունքների պաշտպանը, նա պէտք է զգայ, որ իրեն ոչ միայն լսում են տուեալ պետական հաստատութիւնում, այլեւ իր կողքին կանգնած պաշտպան կայ, որը կարող է իր հետ գնալ պետական հաստատութիւն եւ պետական հաստատութիւնից պահանջել իրաւունքի իրացում: Դա պէտք է լինի»:

Արթուր Սաքունց. «Հանրաքուէի Ընթացքում Տեղի Ե Ունեցել Կազմակերպուած Յանցագործութիւն»

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցի համոզմամբ, 2015 թուականի Դեկտեմբերի 6-ի սահմանադրական հանրաքուէի ընթացքում տեղի է ունեցել կազմակերպուած յանցագործութիւն, իսկ կազմակերպուած յանցագործութիւնը, «Ազատութեան» հետ գրոյցում ընդգծեց նա, «առանձին էպիզոդիկ դրուագներով չի քննուում»:



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց

Այս օրերին, չիչեցնենք, դատարաններում արագացուած կարգով ընտրակեղծիքներին վերաբերող գործեր են քննուում, կարճ ժամանակում վճիռներ են կայացուում: Դատարանները նոյնիսկ չեն փորձում պարզել ընտրակեղծիքների դրուագաւծանները:

Իրաւապաշտպանի խօսքով, փորձ է արւում առանձին էպիզոդներով քրէական գործերի միջոցով կոծկել կազմակերպուած յանցագործութեան բնոյթը: «Յանցագործութիւն, որի մէջ մասնակցել են պաշտօնատար անձինք, որի մասին նաեւ ԺՀՄԻԳ-ն է նշում. խօսքը վերաբերում է նախագահի աշխատակազմի ղեկավարին, վերահսկողութեան ծառայութեան պետին, վարչապետին, այսինքն՝ մարդիկ, որոնք ի պաշտօնէ ներգրաւուելով այս գործընթացի մէջ, չէին

կարող գերծ մնալ իրենց պաշտօնով տրուած լիազօրութիւնների իրականացումից՝ ուղղուած հանրաքուէի այսպիսի խայտառակ իրականացմանը», - ասաց Սաքունցը:

ԵԱՀԿ-ի դիտորդները, չիչեցնենք, սահմանադրական հանրաքուէի վերաբերեալ իրենց վերջնական գեկոյցում քննադատել են, մասնաւորապէս, պաշտօնեաների ներգրաւուածութիւնը քարոզարշաւում: «Հանրաքուէի ընթացքում իշխանութիւնները «Այո» քարոզարշաւի համար խոշոր հանրային միջոցներ մոբիլիզացրելին», - ասուած է գեկոյցում:

«Անհեթեթութիւն Ե, Որ Քուէարկուած Ցուցակների Հրապարակումը Համարում ԵՄ Խախտում».- ԲՀԿ-ական Պատգամաւոր

ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Մարգարեանը NEWS.am-ի հետ գրոյցում անհեթեթութիւն համարեց իշխանութեան այն պնդումները, որ քուէարկուած ցուցակների հրապարակումը քուէարկողի գաղտնիութեան իրաւունքի խախտում է:

է համաձայնական ընտրակարգն առանց ռեյտինգային մոդելի:

«Եթէ ասում ենք՝ կարեւոր է քաղաքական, կուսակցական համակարգի կայացումը, էդ դէպքում բերէք մաքուր համամասնական ընտրակարգ անենք: Եթէ մաքուր չենք անում, ուրեմն յետին միտք կայ: Այսինքն՝ ռեյտինգով կարելի է հետ բերել մեծամասնական ընտրակարգը», - ասաց պատգամաւորը:

«Ես անհեթեթութիւն եմ համարում, որ ասում են խախտում է գաղտնիութեան իրաւունքը, եթէ կան բազմաթիւ տեսախցիկներ ու նկարահանում են տեղամասը, քաղաքացիներին, որոնք քուէարկում են, մտնում են տեղամաս ու դուրս գալիս, ինչ գաղտնիութեան մասին է խօսքը», - նշել է նա:

Պատգամաւորը յետին միտք է տեսնում նաեւ համամասնական ընտրակարգը կուսակցութեան թեկնածուների ռեյտինգային ցուցակով իրագործելու գաղափարի մէջ: Ըստ նրա՝ այդպիսով մեխանիզմը փորձում են նմանեցնել մեծամասնական ընտրակարգին, մինչդեռ կուսակցութիւնների կայացմանը նպաստում

Մեր գրուցակիցը, որը դէմ է եղել սահմանադրական փոփոխութիւններին, ասաց, որ կողմ է մատնահետքով քուէարկութեանը, ինչը միաժամանակ լուծում է մի բանի հարց:

«Կրկնակի քուէարկութեան կանխումը եւ փաստաթղթի հարցն է լուծուում, անձը հաստատող ցանկացած փաստաթղթով կարող ես գնալ եւ քուէարկել»: Լուծուում է նաեւ ցուցակների հրապարակելու հարցը: Մատնահետքով քուէարկութեան դէպքում, ըստ նրա, կարող են չհրապարակուել ցուցակները:

«Վիզէն Սարգսեանը ԵՄ Յովհաննէս Յովսէփեանը Հանրային Միջոցներ Զեն Օգտագործել»

Նախագահ Սերժ Սարգսեանի խօսնակն անդրադարձել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագիտական խմբի հնչեցրած քննադատութիւններին՝ նշելով, թէ նախագահականի պաշտօնեաների մասնակցութիւնը «Այո»-ի քարոզարշաւին չի հակասում օրէնքին: Փաստելով, որ այս բոլոր պաշտօնեաները վարձատրուում են պետական եւ տեղական պիւտձէից, գեկոյցը նշում է. - «Նրանք զգալի հանրային միջոցներ են օգտագործել «Այո» քարոզարշաւի ընթացքում՝ դրամով իսկ մարտահրահէր նետելով ԵԱՀԿ-ի եւ այլ միջազգային կառույցների առջեւ ստանձնած պարտաւորութիւններին»:

Նախագահ Սերժ Սարգսեանի խօսնակ Վլադիմիր Յակոբեանը, պատասխանելով «Ազատութեան» հարցին, յայտնեց. - «Հայաստանի Հանրապետութեան ընտրական գործընթացներում Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի եւ վերահսկողական ծառայութեան պետի ներգրաւուածութիւնը որեւէ կերպ չի հակասում գործող օրէնսդրութեանը: Վիզէն Սարգսեանը եւ Յովհաննէս Յովսէփեանը 2015թ. սահմանադրական բարեփոխումների քարոզարշաւի ընթացքում «Այո» նախընտրական շտաբի աշխատանքներին մասնակցել են աշխատանքից ազատ ժամերին»:

Սերժ Սարգսեան. «Յայաստանը Պատրաստակամ Է Առաջ Մղելու Եւրոպական Միութեան Հետ Փոխգործակցութիւնը»



ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան կը գեկուցէ Եւրոպական պահպանողականներու եւ բարեկարգումներու խումբի նախագահ Եան Զահրադիլի հետ

Հայաստանը պատրաստակամ է առաջ մղելու Եւրոպական Միութեան հետ փոխգործակցութիւնը: Այդ մասին ասել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը, որն ընդունել է Եւրոպական խորհրդարանի Եւրոպական պահպանողականների եւ ռեֆորմիստների խմբի նախագահ Եան Զահրադիլին:

Հանդիպմանը քննարկուել են Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեանը, այդ թւում՝ ԵՄ խորհրդարանական փոխգործակցութեանը, ԵՄ աջակցութեամբ ՀՀ-ում իրականացուող բարեփոխումներին, ինչպէս նաեւ փոխադարձ հետաքրքրութիւններ կայացնող մի շարք հարցեր:

Հանրապետութեան նախագահն ընդգծել է, որ Հայաստանը պատրաստակամ է առաջ մղելու Եւրոպական Միութեան հետ փոխգործակցութիւնը բարեփոխումների խթանման, շարժունակութեան, արդիւնաւէտ կառավարման, ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների, բազմոլորտ տնտեսական համագործակցութեան եւ երկուստեք հետաքրքրութիւններ կայացնող այլ բնագաւառներում: Նախագահի համոզմամբ, այս գործընթացում կարեւոր դեր ունի նաեւ Եւրոպական խորհրդարանի գործընկերների հետ համագործակցութիւնը:

Սերժ Սարգսեանը նշել է, որ Հայաստան-Եւրամիութիւն ակտիւ փոխգործակցութիւնը, այդ թւում բարձրաստիճան փոխալցելութիւն-

ները, լաւագոյնս վկայում են ՀՀ-ԵՄ յարաբերութիւնների շարունակական զարգացման մասին: Անդրադառնալով տարեկերջին Բրիւսելում տրուած ՀՀ-ԵՄ նոր համապարփակ իրաւական փաստաթղթի շուրջ բանակցութիւնների մեկնարկին՝ նախագահ Սարգսեանն ընդգծել է՝ Հայաստանն ակնկալում է, որ բանակցութիւնները կ'ընթանան բնականոն հունով, եւ կողմերը յաջողութեամբ աւարտին կը հասցնեն այդ կարեւոր գործընթացը:

Հիւրի խնդրանքով Հանրապետութեան նախագահն անդրադարձել է Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութեանը, իր տեսակէտները ներկայացրել միջազգային արդի խնդիրների եւ տարածաշրջանային մարտահրաւէրների վերաբերել, տեղեկացրել ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգաւորման բանակցային գործընթացի վերջին զարգացումների վերաբերել:

Եւրոպական խորհրդարանի Եւրոպական պահպանողականների եւ ռեֆորմիստների խմբի նախագահ Եան Զահրադիլը ներկայացրել է իր կուսակցութեան անցած ուղին, ներկայ առաջնահերթութիւնները, Եւրոպայում առաջատար այդ քաղաքական ուժի գործունէութիւնը եւ ընդգծել, որ կուսակցութիւնը շահագրգռուած է Հայաստանի հետ զարգացնելու համագործակցութիւնը ինչպէս միջկուսակցական, այնպէս էլ Հայաստան-Եւրամիութիւն ձեւաչափերով:

Եւրոպական Միութիւնը Կը Պայմանաւորէ

Շարունակուած էջ 1-էն

րազրելու համար:

Ընդունելով Մարկօս վարչապետին նախագահ Սերժ Սարգսեան մեծապէս գնահատած է Եւրամիութեան աջակցութիւնը Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներում:

Տարածաշրջանային Հետազոտութիւններու Կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսեան, որ ինք եւս հանդիպած է Մարկօս վարչապետին՝ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներուն հետ միասին, «Ազատութեան» հետ գրոցելու ընթացքին ըսաւ, թէ Հայաստանի իշխանու-

թիւնները միջազգային հանրութեան առջեւ երեք քննութիւն ունին յանձնելու, որոնցմէ առաջինը սահմանադրական հանրաքուէն էր. - «Դժբախտաբար, Հայաստանի իշխանութիւնները ձախողեցին առաջին քննութիւնը: Երկրորդ քննութիւնը Ընտրական օրէնագիրքն է, որը հետեւելու է սահմանադրական հանրաքուէին: Եւ վերջապէս՝ 2017 թուականի Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւնները: Դրանք վճռական նշանակութիւն են ունենալու Հայաստանի ապագայի համար, եւ յառաջիկայ ընտրութիւններու արդիւնքները շատ աւելի կարեւոր են, քան նախորդ ընտրութիւններինը»:

Յայաստանից Օդային Գանապարհով Մեկնողների Թիւն Աւելացել է

2016 թուականի Յունուարին «Զուարթնոց» օդանաւակայանով Հայաստանից մեկնողների թիւը աւելին է եղել, քան ժամանողներինը: ՀՀ քաղաքացիայի գլխաւոր վարչութիւնը տեղեկացնում է, որ 2016 թուականի Յունուարին «Զուարթնոց» միջազգային օդանաւակայանը փոխադրել է 137 303 ուղեւոր՝ 2015 թուականի նոյն ժամանակահատուածի 131 916 ուղեւորի համեմատ: Նոյն ժամանակահատուածում Հայաստան է ժամանել 65 745 մարդ՝ 2015 թուականի 63 546-ի դիմաց, իսկ Յունուարին մեկնել է

71 558 մարդ, ինչը նախորդ տարուայ Յունուարի համեմատ 3 188-ով աւելի է: 2016 թուականի Յունուարին «Զուարթնոց» օդանաւակայանով տեղափոխուել է մօտ 708 տոննա բեռ, իսկ 2015-ի Յունուարին՝ 428 տոննա: Մասնաւորապէս, նշուած ժամանակահատուածում արտահանուել է 470 տոննա բեռ (2015-ին՝ 239 տոննա), ներկրուել՝ 238 տոննա բեռ (2015-ին՝ 189 տոննա): Թուիչքների ու վայրէջքների ընդհանուր թիւն օդանաւակայանում Յունուարին կազմել է 680՝ 2015-ի 727-ի դիմաց:

Հինգ Նոբելեան Մրցանակակիրներ Կը Գան Հայաստան

Երեւանի Միթար Հերացու անունան պետական բժշկական համալսարանը 2016թ.-ի Ապրիլի 11-16-ը կազմակերպում է բացառիկ միջոցառում. հիւրընկալում են 5 Նոբելեան մրցանակակիրներ մէկ հարկի տակ: Երեք օր անընդմէջ նրանք հանդէս կը գան հանրային եւ մասնագիտական դասախօսութիւններով, որոնք նպատակ ունեն ներկայացնելու Նոբելեան մրցանակակիրների կողմից առաջ քաշուած

յայտնագործութիւնները եւ մասնագիտական դաշտում ունեցած գիտական ձեռքբերումներն ու բացառիկ յաջողութիւնները: Սա աննախադէպ հնարաւորութիւն է տեսնելու եւ լսելու այն, ինչը փոխել է աշխարհն ու դարձել արժանի՝ Նոբելեան ժառանգութեան: Սա նաեւ գիտական երկխօսութիւն ու մտերմիկ գրոցի հնարաւորութիւն է տարբեր մշակույթներ եւ աւանդույթներ կրող, տարբեր գիտական դպրոցներ ներկայացնող անհատների միջեւ:

ԵՏՍՆախարար. «Յայաստանում Ապօրինի Հարկ ԵՄ Գանձում»

Տեսակամրջի օգնութեամբ Մոսկուայի, Երեւանի ու Աստանայի միջեւ կազմակերպուած ասուլիսի ընթացքում, ԵՏՄ ինտեգրման եւ մակրոտնտեսութեան հարցերով նախարար Վալովաեան յայտարարեց, թէ երբ Հայաստանի իշխանութիւնները 20 տոկոս աւելացուած արժէքի հարկ են գանձում ԵՏՄ երկրներից Հայաստան ավտոմեքենայ ներմուծող ֆիզիքական անձանցից, դա հակասում է միութեան իրաւապայմանագրային դաշտին: «ԵՏՄ ներսում ոչ-տարիֆային պատնէշներ զե ժուրէ չկան: [ԵՏՄ] պայմանագրում յստակ գրուած է՝ միութեան անդամ երկրները չեն կարող միմեանց նկատմամբ կիրառել ոչ-տարիֆա-

յին պաշտպանութեան միջոցներ: Միեւնոյն ժամանակ, մենք բաւականին յաճախ ենք յայտնաբերում նման պատնէշներ: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ կա'մ պետութիւնները ամբողջովին, յստակ չեն կատարում որոշումները, կա'մ ինչ-որ մակարդակում մեզ մօտ յստակ չէ իրաւակիրաւական արակիրտիկան», - ասաց նա: Ըստ Վալովայայի, անցած տարի ԵՏՄ անդամ երկրների վարչապետների յանձնարարութեամբ Եւրասիական տնտեսական յանձնաժողովը գեկուց է պատրաստել միութիւնում նման պատնէշների վերաբերել, ուր ներկայացուած են նաեւ այն միջոցները, որոնք պէտք է ձեռնարկուեն նման պատնէշները վերացնելու համար:

Յայաստանի Արտաքին Քաղաքականութեան Բացարձակ Չախողում

Շարունակուած էջ 1-էն


«Երբ ինչ-որ հարցով դիտարկումներ ենք անում, արձագանքում են, թէ արտաքին քաղաքականութեան բնագաւառում կուլիսային բանակցութիւններ են տեղի ունենում: Ինձ մօտ տպաւորութիւն է, որ Արտաքին գործերի նախարարութիւնն Ազգային անվտանգութեան նախարարութիւնն է», - ըսաւ Նարեկ Գալստեան:

Ներքին հարցերու մասին խօսելով Գալստեան վերահաստատեց կուսակցութեան այն տեսակէտը, որ Հայաստանին անհրաժեշտ են համակարգային փոփոխութիւններ: Անդրադառնալով ՀՅԴ-ի՝ կոալիցիա մտնելու հարցին, ՄԳՀԿ ատենապետը ըսաւ, - «Դաշնակցութեան գործն է, սուվերէն կուսակցութիւն է, իր խնդիրն է՝ որտեղ միանալ, ինչ անի: Ես կար-

ծում եմ, որ դրա արտացոլումը կը լինի ընտրութիւններին՝ բարձր կամ ցածր քուէների ստացումը: Բայց եթէ երկրում չեն կատարում համակարգային փոփոխութիւններ, ապա կոսմետիկ դաշինքները, գործընթացները չեն կարող հանգեցնել բարեփոխումների: Մեզ իսկապէս անհրաժեշտ են համակարգային փոփոխութիւններ, իշխանութեան տրամաբանութեան փոփոխութիւն», - աւելցուց Նարեկ Գալստեանը:

«Իւրաքանչիւր կուսակցութիւն ինքն է որոշում՝ կոալիցիա կը կազմի, թէ՞ ոչ: Իւրաքանչիւրն ինքն է որոշում՝ դրանից կը լաւանայ ՀՀ քաղաքացու սոցիալական վիճակը, պաշտպանութեան թիւնը: Կարծում եմ, որ առանձնապէս դրական փոփոխութիւններ այս պահին սպասել պէտք չէ», - եզրակացուց Նարեկ Գալստեանը:

ԿԱԶՄՈՒԵԼ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԵԶԸ



Հրանտ Դինք հիմնադրամբ «Անատոլական մշակութային ժառանգութիւն» նախագծի շրջանակներում հայերի, յոյների ասորիների եւ հրեաների կողմից կառուցուած եկեղեցիների, սինագոգների, վանքերի, դպրոցների, հիւանդանոցների ու գերեզմանատների դոկումենտացիան անցկացրել: Մօտ 2,5 տարի տեւած աշխատանքների արդիւնքում ցուցակագրուել է 10 հազարի չափ կառուց, որոնցից 4,600 հայկական է, 4100-ը՝ յունական, 650-ը՝ ասորական, 300-ը՝ հրեական: Հիմնադրամբ այս բոլոր կառուցները ներառող ինտերակտիւ քարտեզ է կազմել, որը ermenihaber.am-ի փոխանցմամբ՝ կարելի է տեսնել turkiyekulturvarliklari.com կայքում:

Աշխատանքներն իրականացրել են հետազոտողներ Վահագն Քէչիչեանը, Նորա եւ Զաքարիա Միրզանոյլուները, Նորայր Օլգարը, Մուստաֆա Բաթմանը, Էգգի Դենիզ Բերքը, Մերուէ Գուրթը, Թունա Բաշբեքը եւ այլք:

Հետազոտողները կանգուն մնացած կառուցներից բացի, ողջ Անատոլիայի համար կազմել են նաեւ քանդուած, ավերուած, չպահպանուող, որպէս պահեստ ու ախոռ օգտագործուող կամ մզկիթի վերածուած կառուցների ցուցակ: Նախագծին աջակցութիւն են ցուցաբերել Թուրքիայի Եւրամիութեան հարցերով նախարարութիւնը, «Բաց հասարակութիւն» եւ «Chrest» հիմնադրամբները:

Թուրքիայում հրատարակուող հայկական «Ակօս» թերթին աշխատանքի վերաբերեալ մանրամասներ են պատմել նախագծի մասնակիցները:

Վերջիններս նշել են, որ սա իր բնոյթով եզակի աշխատանք է, քանի որ մինչեւ օրս Թուրքիայի քրիստոնէական կառուցների վերաբերեալ նմանատիպ համապարփակ ուսումնասիրութիւն չէր կատարուել:

Հեղինակները նշել են, որ լաչնօրէն օգտուել են եկեղեցական մատենաներից եւ բոլոր այն աղբիւրներից, որոնք այս կամ այն կերպ առնչուել են ինդրոյ առարկայ կառուցների հետ: Ուսումնասիրութիւնները կատարելու հնարաւորութիւն են ունեցել նաեւ Թուրքիայի կառավարութեան ենթակայութեան տակ գտնուող Օսմանեան արխիւներում:

Հեղինակները նշել են, որ աշխատանքների ժամանակ ամենամեծ դժուարութիւնը ստեղծել է Թուրքիայի բնակավայրերի անունները, որոնց հանրապետական շրջանում համաարած նոր անուններ են տրուել:

Նախաձեռնութեան մասնակիցները տեղեկացրել են, որ աշխատանքներն այդքանով չեն ավարտուել, քանի որ 2-րդ փուլով նախատեսում են մեկնել Թուրքիայի տարբեր շրջաններ եւ մէկ-մէկ ստուգել բոլոր այն կառուցները, որոնց մասին տեղեկութիւններ են հաւաքագրել:

ՍԵԻԱՆ ՆՇԱՆԵԱՆ ԴԱՐՁԵԱԼ ԾԱՆՐ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՏԱԿ

Թուրքիոյ մէջ 11 տարիով բանտարկուած Սեւան Նշանեան դարձեալ յայտնուած է ծանր պայմաններու տակ: Այս մասին «Արեւելք» տեղեկութիւն ստացաւ Անգարայի իր աղբիւրէն: Նշանեան ներկայիս փոխադրուած է փակ բանտ մը, եւ անոր դէմ առկայ է ծանր հսկողութիւն: Ըստ տեղեկութիւններու, Նշանեանի հանդէպ բանտային փակ ընթացի կիրառելը կապ ունի անկարգապահութեան մը հետ, բայց այդ առումով չաւելեալ յստակ տեղեկութիւններ չկան:



Իր կարգին Սեւան Նշանեանի փաստաբան Մուրատ Աքչը, նեղ շրջանակներու մօտ խօսելով ինդրին մասին յայտնած է, թէ Սեւանի վիճակը բաւական դժուար է, եւ ինք կարեւոր ճիգեր պիտի գործադրէ դատական աստեանին մօտ ինդրին վերանայումը ապահովելու

համար: Փաստաբանը մտահոգութիւն յայտնած է, թէ նոր բանտի դրութեան մէջ Նշանեան լուրջ դժուարութիւններ կրնայ ունենալ իր ակադեմական աշխատանքները շարունակելու առումով:

Ինչպէս նախօրոք յայտնած էինք՝ Նշանեան բանտի ճաղերու ետին ձեռնարկած է նոր ուսումնասիրութիւններու, որոնց ամէնէն հիմնականը թրքերէն նոր բառարանի մը կազմութիւնն է: Հայ լեզուաբանը Թուրքիոյ մէջ այսօր կը համարուի ամէնէն ունակ թրքագէտներէն մին:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԱՐԴԻԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋ ՄԸ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱՅ



Քանի մը օր առաջ սկսաւ Լոս Անճելոս քաղաքի 6րդ փողոցը արեւելեան շրջանին միացնող կամուրջի քանդելու աշխատանքը: 1930ական թուականներուն կառուցուած այս կամուրջն արդէն հնաբոյր, անհրապարտիչ եւ երկրաշարժի դէմ ոչ ապահով վիճակ մը կը ներկայացնէր:

Նոր կամուրջի շինութիւնը պիտի աւարտի 2019 թուականին եւ պիտի արժէ շուրջ 500 միլիոն տոլար: Գերադիական այս կամուրջը նոր շունչ եւ թարմութիւն պիտի բերէ քաղաքին: Արդարեւ կամուրջի փլուզման շրջանին որոշուած է չի գործածել ոչ մէկ պայթուցիկ նիւթ, առաջին անգամ համար աղիտալի հետե-

լանքներու: Արդարեւ նոր կամուրջի մանրակերտը դիտելով կը հետեցուի որ ան պիտի բաղկանայ երկու յարկերէ: Վերի յարկը պիտի շտակացուի թէ հետիոտն անցորդներուն թէ ինքնաշարժերու եւ փախադրակառքերու համար: Իսկ ներքեւ մասը պիտի ըլլայ զբօսավայր, իր արդիական գեղատեսիլ յարմարութիւններով ու ինքնատիպ ոճով:

Շրջապատի բնակիչները թէ կ'ափսոսան դասական եւ հնաբոյր կամուրջի անհայտն վրայ եւ թէ միաժամանակ լաւատեսութեամբ կը նային մօտաւոր ապագային նոր ու արդիական կամուրջ մը տեսնելու վարկածին:

ԻՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՍՈՒՐԻԱ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ ԶԱՒԱՆԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԴԵՄ

Շաբաթավերջի լուրերուն համաձայն Սէուտական Արաբիա կը ծրագրէ զինուորական ներխուժում կատարել դէպի Սուրիա, ԱՄՆի կողմէ ղեկավարուող սուրիական հակավարչակարգային զինակցութեան օժանդակելու համար:

Իսկ Պէյրութէն ստացուած լուրերուն համաձայն Սուրիոյ արտաքին գործոց նախարար՝ Ուալիտ Մուալլէմ, մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարած է «Որեւէ արտաքին ոյժ որ միջամուխ կը դառնայ կառավարութեան դէմ՝ պիտի չի կարենայ ողջ մնալ»:

Միւս կողմէ Իրանի Յեղափոխական Պահակի ղեկավարը Ռիաւտի իշխանութիւններուն դէմ արտայայտուելով շեշտած է հետեւեա-

լը. «Եթէ Սէուտական Արաբիան գօրք դրկէ Սուրիա այն ատեն իր վերջը կը գտնէ Սէուտական Արաբիան»: Իսկ այս կապակցութեամբ գորավար Մուհամմատ Ալի ժաաֆային լրագրողներուն յայտնեց թէ «Ի հարկէ այդ բանը վատ պիտի չըլլայ»:

Նշենք նաեւ որ վերջերս Սուրիոյ վարչակարգային գօրքերը մաքրագործած են Հալէպ քաղաքը ներխուժած ընդդիմադիրներէն, որոնք մեծ պարտութիւն մը կրեցին մասնաւորաբար երկրի հիւսիսային շրջաններուն մէջ եւ դժուարութիւն ունին անցնելու Թուրքիա, ուր պատսպարուած կը մնան ավելի քան 2 միլիոն սուրիացի փախստականներ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԵՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

ԸՆԿ. ՅԱԿՈՒՐ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԱԹԵՆՔԻ ՄԷՋ

Անցեալ շաբաթ Յունաստան այցելեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան: Աթէնքի մէջ Ընկ. Տիգրանեան ելոյթ ունեցաւ շրջանի րնկերներու եւ համակիրներու ներկայութեան անդրադառնալով Յունաստանի մասնաճիւղի վերակազմաւորման, Հայաստանի եւ հայութեան ներկայ իրավիճակի, Հայկական Ցեղասպանութեան մանազման աշխատանքներու եւ Հնչակեան Գիտական Կախադաններու 100-ամեակին եւ այլ հարցերու:

Ստորեւ Ընկ. Տիգրանեանի ունեցած ելոյթը Աթէնքի մէջ:



Յարգելի Ներկաներ,

Վերջին տարիներուն տարբեր առիթներով վերահասու դարձանք Յունաստանի հայկական գաղութին մէջ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան աշխուժացման մասին: Այս երեւոյթը ինքնապատակ չէ եւ տեղի ունեցող գործընթացները բնականօրէն կը կատարուին մեր ժողովուրդի խորքերէն բխող ընդհանուր պահանջի մը իբրեւ արդիւնք:

Այսօր ուրեմն այս հանդիսաւոր պահուն թոյլ տուէք ողջունել այս գաղութի մէջ գործող եւ մեր կուսակցական կեանքին նոր խթան տուող իւրաքանչիւրին: Առանց ձեր ճիգին ու մասնաւոր հաւատքին կարելի պիտի չըլլար գաղութին մէջ դրական ոգիով գործող եւ հայութեան խնդիրներուն հետամուտ եղող մեր կուսակցութեան վերաթարմացումը տեսնել:

Բնական է, որ կատարուելիք աշխատանքները բաւական երկար ճանապարհի մը վրայ պիտի ըլլան: Այս գործունէութիւններուն վերաբերեալ ամէնէն հիմնական կէտը ինչպէս վերը նշեցի պիտի ըլլայ գաղափարական հաւատքը:

Գաղափարական հաւատքը, առանց մեծ բառերու շքերթին կամ վերամբարձ ոճերու արտասանութեան:

Պարզութեան, նուիրումի եւ ամէնէն փոքր գործերէն մինչեւ ամէնէն մեծ գործերը պիտի տարուին առանց աղմուկի եւ առանց շատախօսութեան:

Պատմական յղում մը կատարելով տեղին կը համարեմ յիշատակել, որ մեր դարաւոր կուսակցութեան արմատներուն մէջ նուիրական դարձած են մէկը բոլորին եւ բոլորը մէկին համար ըմբռնումը եւ այդ ըմբռնման հիմքով է միայն, որ մենք պիտի կարողանանք այսօրուան աշխարհին մէջ թիավարել ու շարունակել մեր երթը:

Անցնող երեսուն տարիներու ազգային մակարդակի վրայ մեր գրանցած նուաճումները պէտք է ամէն առիթի դարձնենք փարոս ու այդ լոյսին վրայ յենելով քալենք դէպի աւելի լուսաւոր ապագայ: Հայաստանի անկախ հանրապետութեան հռչակում, Արցախեան գոյամարտի յաղթանակի ամբողջական զրահական մթնոլորտի հաստատում: Ահա այն գլխաւոր հիմքերը, որոնք դարձան մեր հաւաքական կեանքի գլխաւոր առանցքը:

Կետութեան հռչակում, Արցախեան գոյամարտի յաղթանակի ամբողջական զրահական մթնոլորտի հաստատում: Ահա այն գլխաւոր հիմքերը, որոնք դարձան մեր հաւաքական կեանքի գլխաւոր առանցքը:

Խօսելով Համահայկական հիմնական օրակարգին՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ անոր առընթեր պահանջատիրութեան մեր երթին մասին պէտք է արձանագրենք, որ անցնող տարիներ այս առումով եղաւ ամբողջական նուաճումներու տարի մը:

Հայութիւնը իր տարբեր թեւերով, հոսանքներով ու կրօնական եւ գաղափարական ընտանիքներով կարողացաւ արժանապայել կերպով նշել Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը: Պէտք է նաեւ նշել, որ այսօր Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակէն ետք մենք տարբեր գետիներու վրայ պարտաւոր ենք նոյն լրջութեամբ եւ նոյն ոգիով շարունակել մեր երթը: Զիջելու տեղ չունինք: Ընկրկելու տեղ չունինք: Ինչպէս երէկ այսօր եւս, որպէս իրաւատէր պարտաւոր ենք նոյն ոգիով շարունակել պահանջատիրական մեր երթը եւ այդ աշխատանքները բաժնել տարբեր ոլորտներու մէջ: Առանց պահանջատիրական յստակ եւ օրինաչափութեամբ ծրագիրներու թուրք-իայէն մեր ունեցած պահանջները կը մտնեն աղոտ եւ անօգուտ ճանապարհներու մէջ: Ու այդ առումով մենք որպէս ազգային մարմիններ պարտաւոր ենք պահանջատիրական գործունէութիւնը տանիլ իրաւական ճանապարհներով: Բնական է, որ այս բոլորը պէտք է տարուին հաւաքական ճիգերու մէկտեղումով եւ ընդհանուր համակարգումով մը, որուն ամէնէն հարազատ եւ հիմնական ամպիոնը կը հանդիսանայ մշտական դարձած պետական յանձնաժողովի հարթակը, ուր որպէս Հնչակեան կուսակցութիւնը մենք եւս մեր արժանի ներկայութիւնը ունինք:

Խօսելով հայկական կեանքի ընդհանուր պատկերին մասին անհնար է մոռնալ Միջին Արեւելքի ու մասնաւորապէս Սուրիահայութեան տագնապահար իրավիճակը:

Իր 5-րդ տարին թեւակոխած Սուրիոյ արիւնայեղ պատերազմին հետեւանքով նոյնպէս ծանր դրութեան առջեւ յայտնուեցան մեր սիրելի գաղութները ? Դամասկոսը, Հալէպը, Լաթաքիան եւ Քեսապը: Տառապանքի, գաղթի, թշուառութեան մէջ յայտնուած մեր հայրենակիցներէն շատերը լքեցին իրենց երբեմնի ապահով երդիքները եւ հեռացան դէպի հեռաւոր ափեր: Անոնց կարելի մէկ տոկոսը հանգրուանեց Հայաստան ու Լիբանան: Ու այսօր բացորոշ է, որ սուրիահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն օժանդակելու պարտականութիւնը դարձած է հիմնական առաջնահերթութիւն մը: Միջազգային սուր տագնապի վերածուած սուրիական պատերազմին մէջ շատ դժիւսեմ ու սեւ եղաւ թուրքիոյ ունեցած դերակատարութիւնը: Սուրիոյ պատերազմը անպայման պիտի աւարտի ու լիայոյս ենք, որ մեր գաղութները պիտի գտնեն իրենց երբեմնի փայլը կարելի է սակայն, որ Միջազգային մարմինները ճիշդ տիակնող կատարելով հասկնան թուրքիոյ ունեցած հրէշային դերը այս անմարդկային պատերազմին մէջ:

Վերադառնալով Հայաստանի օրակարգին այսօր աւելի քան որեւէ ժամանակ պէտք է աշխուժացնել եւ արդիական միջոցներով դիմելով ուռճացնել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները: Այդ յարաբերութիւններուն մէջ կարելի է հիմնարար դեր պէտք է ունենայ մեր երիտասարդութիւնը:

Ինչ կը վերաբերի Արցախին պէտք է հաւատալ եւ նշել, որ Արցախեան յաղթանակը ամէնօրեայ մաքառումի արդիւնք էր: Այսօր եւս այդ յաղթանակը կարիք

ունի մեծ եւ կարելի գոհողութիւններու եւ այս առումով անվերապահօրէն կը կարելորուի Հայոց բանակի դերն ու տեղը մեր ընդհանուր կեանքին մէջ: Ինչպէս երէկ այսօր եւս մեզմէ իւրաքանչիւրը պատրաստ պէտք է ըլլանք ընդհանուր գոհաբերութեան ուղղին առաջ: Արցախի յաղթանակը եւ անոր անվտանգութեան ընդհանուր ձեւաչափը մշտական կերպով պէտք է մնան մեր մտահոգութեանց ուղեծիրին մէջ: Մենք իբրեւ Հնչակեաններ այս առումով կարելի աշխատանք կը կատարենք մասնաւորապէս Արցախի հանրապետութեան միջազգային ճանաչման առընթեր եւ այդ առումով վստահաբար պիտի շարունակենք մեր գործունէութիւնը: Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան ինքնորոշման հարցը պէտք է հիմնուի մասնաւորապէս անոր քաջարի եւ յաղթանակ տարած բնակչութեան ինքնորոշման իրաւունքով եւ այս մօտեցումը պէտք է յարգուի բոլոր կողմերուն կողմէ:

Արագ անցում մը կատարելով պէտք է անդրադառնալ Հայաստանի քաղաքական կեանքի վերջին անցու դարձերուն: Պէտք է շեշտադրել, որ քաղաքական բոլոր կողմերը կը պատրաստուին յառաջիկայ հանգրուանին, որ կը պայմանաւորուի մասնաւորապէս յառաջիկայ տարի 2017 թուականին տեղի ունենալիք Հայաստանի ազգային ժողովի ընտրութիւններով: Մեր հայրենիքը կարելի հանգրուան մը կտրեց երկրին համար ապահովելով խորհրդարանական համակարգի ընդհանուր կառավարման եղանակ մը: Ու այսօր

Շաբ.ք էջ 18

Հրապարակային Բննարկում

Կազմակերպութեամբ՝
 ՄԴՀԿ «Փարամագ» Մասնաճիւղի
 Նիւթ՝
Փարամագ Եւ Հրանդ Տիմր
 Օսմանեան Կայսրութեան
 Եւ Թուրքիոյ Հանրապետութեան
 Ժողովրդականացման Առաքելները

Կը Ձեկուցէ՝
Յարութ Տէր-Դաիթեան

Տեղի Կ'ուճեմայ Զինգաբթի, Փետրուար 25, 2016-ի
 Երեկոյեան ժամը 8-ին, Փասատիմայի ՅՍՍ-ի
 «Կարօ Սողանալեան» սրահէն ներս

1060 N. Allen Ave. Pasadena Ca. 91104

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԻՆՁ ԱՍՈՒՄ ԵՆ ՉԱՅ ԿԱՐՕ



ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Անմոռանալի Ջրոյց-Յանդիպում՝ Թուրքիայի Խորհրդարանի Անդամ Կարո Փայլանի Յետ

Կարո Փայլանը երեք հայ պատգամաւորներից մէկն է, որոնք Նոյեմբերին խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքով մուտք գործեցին Թուրքիայի խորհրդարան: Կարոն ընտրուել է ժողովուրդների ժողովրդավարական կուսակցութեան (ԺԺԿ) (թուրքերէնով՝ Հ.Տ.Փ.Է. Halkların Demokratik Partisi) կողմից:

Կարո Փայլանը հասարակական-ազգային գործիչ է, տարիներ աշխատել է Պոլսի հայկական դպրոցների համար, անդամակցում է »Սալաթիայի հայերի հայրենակցական« ու նաեւ «Յրանդ Տիմքի ընկերներ» միութիւններին: Փայլանին Թուրքիայի խորհրդարանում «Յայ Կարօ» (Էրմենի Կարօ) կոչումն են տուել. նա այս կարծ ժամանակում մեծ յաջողութիւններ է արձանագրել իր գործում, քայլեր է ձեռնարկել Թուրքիայի հայ համայնքի եւ միւս փոքրամասնութիւնների իրաւունքների ճանաչման համար. վերջերս խորհրդարանում Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տօնի նախօրէին խորհրդարանում ունեցած իր ճառի ընթացքում պահանջել է, որ յատուկ ուշադրութիւն դարձուի եւ ճանաչուի Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տօնը՝ որպէս քրիստոնեաների մեծ տօն այդ երկրում, քանի որ Թուրքիայում դարերից ի վեր ապրել են քրիստոնեայ համայնքներ եւ նշել Ս. Ծննդեան տօնը, այսու նշանակալից տեղ պիտի գրաւի այդ տօնը եւ յիշատակութեան արժանի է Թուրքիայում:

Յիշեալ հարցից բացի, Կարո Փայլանի եւ միւս հայ պատգամաւորների ջանքերի շնորհիւ Քամփ Արմէնի (երբեմնի հայկական որբանոցը Պոլսում) հողատարածքը, որ յափշտակուել էր հայկական համայնքից, յաջողուեց վերադարձնել հայութեան: Կարոն նաեւ մեծ աշխատանք է սկսել Թուրքիայի դասագրքերում խեղաթիւրուած պատմութիւնը ճշտելու գործը եւ հայերին ու միւս փոքրամասնութիւնների մոռացուած պատմութիւնը ճշգրիտ կերպով դասագրքերում արտացոլելու համար եւ զեղչել հայութեան հասցէին գրուած բացասական խօսքերը՝ դպրոցական դասագրքերից:

ՀԱՐՑՈՒՄ.- Իսկ ո՞րն է այն կուսակցութիւնը, որի կողմից ընտրուել է Կարո Փայլանը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցութիւնը հիմնուել է 2012-ին: Կուսակցութեան գաղափարախօսութիւնը հիմնուած է ժողովրդավարութեան եւ ընկերավարութեան սկզբունքների վրայ: Կուսակցութիւնը պաշտպանում է բոլորի իրաւունքները՝ աշխատատեղեր, երկրի տարբեր կրօնական եւ ազգային փոքրամասնութիւններ, կենսոլորտի պաշտպաններ, կանանց, դէմ է սեռային, ազգային, կրօնական կամ այլ կարգի խտրականութիւններին. իր շարքերում անդամակցում են ձախեր, քրտեր, ալեւիներ, հայեր, սեռային բազմազան հակում ունեցողներ, ԺԺԿ-ն իրեն համարում է մարդու եւ քաղաքացիական ազատութիւնների եւ հաւասարութիւնների պաշտպան, որպէս կին եւ տղամարդու հաւասարութիւնը քարոզող եւ օրինակ հանդիսացող՝ իր ղեկավարութեան հանգամանքը բաժանուած է երկու համանախագահների միջեւ կին՝ Ֆիկեն Իւքսեքտաղ եւ տղամարդ՝ Սալահատին Տեմիրթաշ: Կուսակցութիւնը նաեւ ընդունում է Հայոց ցեղասպանութեան իրականութիւնը եւ համարում է, որ Թուրքիան պաշտօնապէս պիտի ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը եւ ներողութիւն պիտի խնդրի հայ ժողովր-

դից... ԺԺԿ-ն խորհրդակցական ձայնով անդամակցում է Եւրոպայի Ընկերավարականների կուսակցութեան (PES) եւ Ընկերվար միջազգայնական կազմակերպութեան. նշելի է, որ Ընկերվար միջազգայնականի անդամ են նաեւ Հայ լեզուաբանական դաշնակցութիւնը եւ Թուրքիայի Ժողովրդա-հանրապետական կուսակցութիւնը: ԺԺԿ-ն որպէս համամարդկային արժէքներ ներկայացնող կուսակցութիւն՝ Յունիսի 7-ին առաջին անգամը լինելով մասնակցեց Թուրքիայի խորհրդարանական ընտրութիւններին, շահեց քուէների 13,1 տոկոսը եւ խորհրդարանի 550 անդամներից 80-ը:

Յունիսի ընտրութիւնների արդիւնքը մեծ յաղթանակ էր այդ կուսակցութեան համար ու նաեւ ապացոյց՝ այն երեւոյթի, թէ Թուրքիայի հասարակութեան այսօրուայ պահանջն է նոր մօտեցումներով մի կուսակցութիւն:

Ինչեւէ, քանի որ Յունիսի 7-ին ընտրուած խորհրդարանը չյաջողեց կազմել կառավարութիւն, ըստ երկրի օրէնքի, տեղի ունեցաւ երկրորդ անգամուայ համար ընտրութիւն՝ Նոյեմբերի 1-ին: Այս ընտրութիւններում թէեւ քաղաքական խաղերի բերումով նուազեց ԺԺԿ-ի քուէների թիւը, սակայն կրկին յաջողուեց մուտք գործել խորհրդարան, այս անգամ՝ 59 պատգամաւորով:

Կարոն երկու ընտրութիւններում էլ թեկնածու առաջարկուեց եւ ընտրուեց ԺԺԿ-ի կողմից:

* * *

Կարօ Փայլանի կեանքում կտրած ուղին, կատարած աշխատանքներն ու մտքերը աշխարհացրիւ հայութեանը ծանօթացնելու նպատակով հանդիպեցի նրան եւ ունեցանք այս շահեկան գրոյցը:

Նախ ծանօթանանք Կարոյի հետ՝ իր լեզուով.

* Հատուածներ իմ կեանքից
Իմ նախնիները Մալաթիայից են, իմ մեծ հայրը եւ մեծ մայրը Մալաթիայից(1) են, նրանք հինգ զաւակ ունէին, որոնցից մէկը հայրս էր. հայրս եւ մայրս էլ ամուսնացել են Մալաթիայում եւ բախտաւորուել են երեք զաւակով՝ երկու տղայ եւ մէկ աղջիկ, մէկը ես եմ: Ծնողներս 1969 թուականին Մալաթիայից գաղթել են Պոլիս՝ հիմնականում երեխաներին հայ հոգով ու հայցեցի դաստիարակութեամբ մեծացնելու նպատակով, Մալաթիային հնարաւորութիւններ՝ ո՛չ դպրոց, ո՛չ եկեղեցի, ո՛չ միութիւն ու մշակութային կենտրոն, նրանք գաղթեցին Պոլիս, որովհետեւ այստեղ գոյութիւն ունին նման հնարաւորութիւններ:

Հայրս ու մայրս հայերէն չգիտէին, մենք տնում խօսել ենք թուրքերէն, մեծ մայրիկներս եւ մեծ հայրիկներս շատ լաւ հայերէն գիտէին, բայց նրանք իրենց զաւակներին չկարողացան հայերէն սովորեցնել, որովհետեւ այդ օրերին Հայոց ցեղասպանութիւնից յետոյ եւ Թուրքիայի Հանրապետութեան առաջին տարիներում երկրում շատ ուժեղ կերպով քաջալերում ու քարոզում էր թուրքերէն խօսելը...

Ես հայ եմ, հայկական դպրոցում եմ ստացել ուսումս, միջնակարգս աւարտելուց յետոյ նաեւ անդամակցել եմ մեր դպրոցի ընթացաւարտների միութեանը: Համալսարանում սովորել եմ վարչագիտութիւն եւ մագիստրատուրա (զերլիսանս) ունեմ տնտեսագիտութեան ճիւղում:

Հայրս մահացաւ 1998-ին, եւ ես ստիպուած եղայ միաժամանակ աշխատել եւ ուսանել, շարունակեցի հայրիկիս բիզնեսը, հայրիկս կօշիկի գործով էր զբաղւում:

Մեր համայնքային հարցերը միշտ չուզել են ինձ, ընտանիքում մեծացել եմ հայկական ոգով, համայնքում ունեցել եմ պատասխանատու հանգամանք, ես տարիներ եղել եմ Պոլսի հայկական գերատեսուչը, այսինքն հայկական դպրոցների կապը եւ ներկայացուցիչը կառավարութեան մօտ՝ մեր դպրոցների եւ կրթադաստիարակչութեան (լուսաւորութեան) նախարարութեան կապը, այդ ուղղութեամբ շատ նախագծեր եմ իրականացրել՝ հայ նոր ուսուցիչներ եւ աշխատանքի հրաւիրել, փոփոխութիւններ եմ առաջարկել ու առաջացրել դասագրքերի մէջ եւ մինչեւ խորհրդարանում ընտրուելս աշխատել եմ այդ պաշտօնում:

* Յրանդ Տիմքի դրոշմը

Ազգային հասարակական իմաստով միայն առօրեայ աշխատանքներով չեմ զբաղուել, ինձ համար միշտ կարեւոր են եղել նաեւ մեր իրաւունքները եւ քաղաքական հարցերը եւս: Աշխատել եմ Հրանդ Տիմքի հետ. 1996-ին, երբ Հրանդը «Ակօս» թերթի հիմնադրման աշխատանքներն էր կազ-

Մար.ք էջ 17

«ՍԱՐՖ» ԹԵԼԵՐՈՆԻ ԱՌԻՈՒԿ ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ ԱՌ ՈՐ ԱՆԿ Է

ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

Իւրաքանչիւր հայու պարտականութիւնն է իր կարողութեան սահմաններուն մէջ օգնելու Սուրիահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն: Վերջ: Փետրուար 21-ին կայանալիք թելեթոնին այն հայը որ իր նիւթական օժանդակութիւնը չբերեր այս նպատակին, կրնայ իր անունն ու մականունը փոխել:

«Ասպարէզ» օրաթերթի Շաբաթ, 9 Յունուար 2016 թիւի 18րդ էջին վրայ կը կարդանք Սուրիահայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմնի խորհուրդի ատենապետ Ժան Թիթիզեանի խօսքերը: «Նուիրաբերուած գումարի հիմնական մասը յատկացուելու է կրթական համակարգին, միւս մասը՝ մարդասիրական գանձանակներին:»

Յարգելի Բարեկամներ, Սուրիահայութեան, բայց մանաւանդ Հայկական հայութեան վիճակը շատ անգանգային էր եւ է:

Զորս տարի առաջ սկսած Սուրիոյ տագնապը մեծապէս վնասած է նաեւ Հայկական հայութեան անձնական, միութենական, համայնքային, եկեղեցական, կրթական եւ այլ կառույցներուն: Զոհեր շատ ունեցանք: Հայկական գաղութը կ'ապրի իր հոգեվարքին մէջ եւ մեր բոլոր ճիգերը զայն փրկելու դատապարտուած են ձախողանքի: Կրնա՞նք Պարսկահայ, Իրաքահայ, Լիբանանահայ, Եգիպտահայ, Եթովպահայ կամ Հնդկահայ գաղութները վերականգնել: Ոչ: Նոյնն է պարագան Հայկական գաղութին: Երազներով չ'օրօրուինք: Բայց մենք այսօր պիտի օգնենք Հայկական գաղութի մնացորդացին որպէսզի փրկենք ինչ որ կարելի է փրկել: Պիտի օգնենք գաղթականներուն եւ հաւանաբար նաեւ Հայաստան ապաստանած կարիքաւորներուն: Հեռաւոր հորիզոնին վրայ խաղաղութեան յոյսի նշույններ կը տեսնենք: Յուսանք եւ մաղթենք որ Հայկական հայութեան մնացորդացը չետ այսու նորանոր ուժակոծումներու կամ այլ տեսակի վնասներու էնթաթախուի եւ շուտով կը սկսի վերաշինել իր կառույցները:

Այս ճիգերը գնահատելի ըլլալով հանդերձ, ինծի եւ ինծի պէս հազարաւոր մտահոգ հայերու համար անհասկնալի կը մնայ այն՝ թէ ինչու՞ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Հայկական հազիւ 200 միլոն հեռաւորութեան վրայ գտնուող Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը տակաւին փակ կը պահէ: Ինչու՞:

Յունուար 19, 2014 թուակիր «Կոչ-Բաց Նապակ»ով եւ 1050 ստորագրութիւններով ինդրագիր մը յղեցինք ՀԲԸՄիութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութեան եւ անոր Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին, որպէսզի վերատեսութեան ենթարկէին 2005-ի Մելգոնեանը փակելու իրենց որոշումը եւ Հայկական 500-1000 աշակերտներու համար վերաբանային Հաստատութիւնը: Տակաւին մեր ինդրագիրը կը մնայ անպատասխան:

Մարտ 24, 2014-ին խնդրագիրներ ներկայացուցինք ՀՀ Վսեմաշուք Նախագահ Տիար Սերժ Սարգիսեանին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսին, ՀՀ

Սփիւռքի եւ Կրթութեան ու Գիտութեան Նախարարութիւններուն, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պիւրոյին որպէսզի բարի ըլլային բարեխօսելու ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչութեան մօտ որպէսզի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբացուէր: Միայն Սփիւռքի Նախարարութեան նամակ մը ստացանք որուն մէջ կ'ըսուէր որ ՄԿ Հաստատութեան տէրը ՀԲԸ Միութիւնն է եւ հետեւաբար անոնք են պատասխանատուները...:

Մայիս 27, 2014-ին երկրորդ նամակով մը շատ քաղաքավարի լիջեցում մը ղրկեցինք վերոյիշեալ մարմիններուն: Դժբախտաբար ապրեցանք ուրիշ յուսախափութիւն մը եւս:

Զմոռցած ըսեմ որ իսկույր մը Մելգոնեանցիներով հանդիպում մը ունեցանք Լոս Անճելըսի «ՍԱՐՖ»ի (Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմին) պատասխանատուներուն հետ որպէսզի իրենք եւս բարեխօսէին կամ դիմում կատարէին ՀԲԸ Միութեան մօտ Մելգոնեանը վերաբանալու եւ ապահով պատասխարան հայթայթելով բարձրորակ ուսում ջամբելու Հայկական մեր գաւակներուն: Մեր խնդրանքը «ՍԱՐՖ»ին՝ մնաց անպատասխան:

Մեր նամակներէն եւ ինդրագիրներէն շատերը տպուեցան «Մասիս»ի, «Նոր Հայաստան»ի, «Ասպարէզ»ի, Հայաստանեան մամուլի եւ Եւրոպայի կարգ մը հայկական թերթերուն մէջ: Այսպէս կոչուած մեր «մտաւորականները» փայլեցան իրենց լուրթեամբ: Հայկական «մտաւորականները, նոյնիսկ Հայկական Մելգոնեանցի՝ «մտաւորական»ները անհասկնալի լուրթեան մէջ էին:

Ես հինգ տարի աշակերտած եմ Մելգոնեան Կրթական Հաստատութեան ներս եւ ութ տարի ալ պաշտօնավարած՝ հոն: Գիտեմ որ շուրջ 750 աշակերտներ կրնան հանգիստ պատսպարուիլ եւ ուսում ստանալ հոն: Նիւթական աղբիւրները կան: Ուրե՞մն:

ՍԱՐՖ-ի պատասխանատուներէն Պրն. Վազգէն Մատենեանի խօսքերով՝ «Նուիրատուութիւնները ուղարկուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, որտեղից էլ գումարը փոխանցուած է սիրիական համայնքի կազմակերպութիւններին ու միութիւններին միաւորող՝ «Շտապ Օգնութիւն» կոչուող մարմին:» Ուրեմն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը շատ մեծ պատասխանատուութիւն ունի Հայկական աշակերտներու ապահով միջավայրի մէջ ուսում ապահովելու:

Թելեթոնի այս առիթով հաւանաբար արժէ ճիգ մը եւս կատարել, ի սէր մեր Հայկական գաւակներու եւ ի սէր Արեւմտահայերէնի պահպանման, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու:

Կը սպասենք պատասխանատուներու պատասխանին, մանաւանդ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ազդու միջամտութեան, միջնորդութեան եւ պատասխանին:

ՍՓԻՒՔԻ ՆԵՐՈՒԺԸ՝ Ի ՇԱՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱՐՈՐՈՒԹԵԱՆ



Փետրուարի 3-ին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Եւրոպական միութեան պատուիրակութեան, ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ «Առաքելութիւն Արեւելք» կազմակերպութեան համատեղ ջանքերով կայացաւ համաժողով՝ նուիրուած երեխաներին առնչուող բարեփոխումների ոլորտում Սփիւռքի ներգրաւման նորարարական ռազմավարութեանը եւ մօտեցումներին: Համաժողովը կայացաւ Եւրոպական միութեան կողմից ֆինանսաւորուող եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացուող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետեւանքների մեղմացում եւ տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրաւման ռազմավարութեան մեծացում» ծրագրի շրջանակում:

Համաժողովին ներկայ էին ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Թակոբեանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Յովակիմեանը, Հայաստանում ԵՄ պատուիրակութեան ղեկավար-ղեկական Պիոտր Անտոնի Սվիտալսկին, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանեան գրասենեակի ներկայացուցիչ Տանիա Ռադչայը, պետական գերատեսչութիւնների եւ կառույցների, սփիւռքի հիմնահարցերով զբաղուող կազմակերպութիւնների աւելի քան 70 ներկայացուցիչ:

Համաժողովում քննարկուեցին Հայաստանի զարգացման գործընթացում սփիւռքի ներգրաւման նորարարական մօտեցումները, ինչպէս նաեւ դրամական փոխանցումների հնարաւոր օգտագործումը երեխաներին առնչուող ոլորտներում:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Թակոբեանը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ նա կարեւորեց նման ձեւաչափի համաժողովի կազմակերպումը եւ նշեց, որ այն տարբեր երկրների փորձը իւրացնելու եւ Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը կատարելագործելու, սփիւռքի ներուժը ի շահ հայրենիքի զարգացման առաւել արդիւնաւէտ կերպով կիրառելու հնարաւորութիւն է ընձեռում:

Նախարարը ներկայացրեց Հայաստան-սփիւռք գործակցութեան ոլորտում Հայաստանի Հանրապետության

Շարք էջ 19

THE NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH (NAASR) AND CO-SPONSORS
 HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY
 HAMAZKAYIN JEMARAN ASSOCIATION • TEKEYAN CULTURAL ASSOCIATION
 NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION • ARARAT-ESKIJIAN MUSEUM

PRESENT

GOODBYE, ANTOURA:

A MEMOIR OF THE ARMENIAN GENOCIDE

Featuring presentations by

Dr. Richard G. Hovannisian
 Professor Emeritus of Modern Armenian and Near Eastern History, UCLA, and Adjunct Professor of History, USC

Maurice Missak Kelechian
 Independent Researcher

Houry Panian Boyamian
 Principal, St. Stephen's Armenian Elementary School, Watertown, MA, and daughter of author Karnig Panian and by video

Prof. Keith D. Watenpaugh
 University of California, Davis

Master of Ceremonies
 Dr. Viken Yacoubian, Professor, Woodbury University, Hamazkayin Central Executive Board

Thursday, February 18, 2016, 7:30 p.m.

Armenian Society of Los Angeles Main Hall
 117 S. Louise Street, Glendale, CA 91205

Massis Weekly

Volume 36, No. 5

Saturday, February 13, 2016

European Union Calls for Political and Economic Reforms in Armenia



YEREVAN -- Sweden's Foreign Minister Margot Wallstrom stressed the importance of political and economic reforms for Armenia's closer relations with the European Union when she visited Yerevan on Tuesday.

Wallstrom discussed with President Serzh Sarkisian and Foreign Minister Edward Nalbandian ongoing negotiations on a new EU-Armenia accord that will serve as a substitute for an Association Agreement nearly signed by the two sides two years ago.

Նախքան ԱՄՆ գնալս միշտ մամայիս հետ միասին եմ ապրել, բացի չորս տարին, որ Լիբանանում սովորում էի, նոյնիսկ ամուսնանալուց յետոյ մի շնչում եմ ապրել, մեր կառուցած երեք յարկանի շէնքում՝ առաջին յարկը պայտաս ու մամաս, երկրորդ յարկը՝ օննիկ եղբայրս իր ընտանիքով, երրորդ յարկը՝ ես իմ ընտանիքով, չորրորդ

յարկը միայն մէկ սենեակ էր, ուր մեր քաւորն էր ապրում, Նորիկ եղբայրս այն ժամանակ սովորում էր արտասահմանում:

Իմ ամուսնութեան կեանքը որոշ փոփոխութիւններ մտցրեց մեր յարաբերութիւնների մէջ հարս-սկեսուր անհանդուրժողականութեան պատճառով, հայրս իր իմաստութեամբ եւ մայրս իր ծով համբերութեամբ անտարբեր էին գտնում որոշ երեխայական վերաբերմունքի նկատմամբ, այդուհանդերձ ծնողիս նկատմամբ պահեցի իմ սէրն ու յարգանքը անփոփոխ:

Մեր իրանահայ կեանքում դժբախտաբար որոշ ընտանիքներում հարս-սկեսուր փոխհասկացողութեան պակասը սուր հետեւանքներ է ունենում պատճառ դառնալով խռովութիւնների՝ եղբայրը եղբօր դէմ, քոյրը եղբօր դէմ եւ այսպէս գրգռութիւններ, որոնք հարազատութեան քաղցր մթնոլորտը վերածում են դառնութեան: Այս անհանգստութիւնները յարուցող գալիս է որոշ ինքնահաւան , գոռոզ եւ կամակոր իզական սեռի կողմից: Հարազատութեան քաղցր ու մտերմիկ յարաբերութիւնները առաւելաբար կապուած է կնոջից, կիրն է, որ տան կառուցողն ու քանդողն է, յուսով մեր աղջիկները այս կենսական խնդիրներին կարեւորութիւն կը տան: Իսկապէս անիմաստ է այս կարծատեւ կեանքը խռովութեամբ ապրել, մարդ-անհատը նմանում է ծառի, ինչպէս ծառն իր տերեւներով, սաղարթներով եւ պտուղով է գեղեցիկ, մարդս էլ իր հարազատներով եւ շրջապատով: Ուրախ, համերաշխ եւ միասնական կեանքը յաջողութիւնների լայն հորիզոններ է բացում մարդուս առջեւ՝ ոնց ջինջ ու անամպ երկնքում արեւն է շողարձակում:

Մայրս 1922-ի ծնունդ էր Բուրվարի գաւառի Սանգֆիղ գիւղում՝ Ովսաննա անունով: Նա իր ծնողներին՝ Թումասի եւ Թամարի եօթ գաւակների անդրանիկ գաւակն էր: Մայրս 14 տարեկանում ամուսնանում է հօրս՝ Սամսոնի հետ, հայրս տասնհինգ տարով մեծ էր մօրիցս: Մայրս ութ տարի գաւակ չի ունենում: Երեխայ չունենալը համարում է Աստուծո գործ, այդու իր գիտակցութեամբ եւ ինչ որ այդ ժամանակներում սովորոյթ էր, դիմում է ամէն տեսակ բարեպաշտ արարքների՝ գիր անելու, ծոմապահութեան, աղօթքի, եկեղեցում կիրակնամուտներին մոմ վառելով, ուխտի գնալով, այսպիսով Աստուծո գութը աղերսելով: Վերջապէս իր աստութեամբ այդ հաւատարիքների գորութեամբ ունենում է ինձ, գոհունակութեամբ ձեռքեր պարզելով Երկնքին, ուխտ է անում՝ մազերս չխուցի, մնամ որպէս դուլ, յետոյ տանի Շուրջկանի եկեղեցին՝ մազերս կտրի:

Իմ աշխարհ գալով մերոնք շատ են ուրախանում ի մասնաւորի հօրս կողմից մեծ պապ՝ տէր Վարդանը: Նա քահանայագործում էր գիւղում եւ Թեհրան քաղաքում, դեռ եօթամասուն տարիքը չբարձրած կարծատեւ հիւանդութեամբ մահկանացուն է կնքում, նա իր առաքելութեան գիտակից յարգուած եւ սիրուած քահանայ էր:

Փոքր 2-3 տարեկան երեխայ էի, որ մեր գերդաստանը հայրենիք գնալուց յուսախաբ տեղափոխում ենք Թեհրան: Գիւղից միայն ու միայն մի շատ աննշան բան եմ յիշում, այդ էլ մեր ցեխէ քարպիչներին (աղիւսի տեսակ) սարքուած երկյարկանի տան դիմացից ձգուած փողոցում, երեկնապահի ժամանակ, երբ հրագունդը իր շողերը հաւաքած, կամաց-կամաց մեր կիսա-

գունդը թողած անցնում էր երկրագունդի միւս կողմը եւ յամրաքայլ մթնշաղը բռնում էր ամէն տեղ: Ահա օրուայ այդ պահին հանդերձները տուն էին վերադառնում յոգնած ու պարտասուած՝ դատարկ մախաղով, հօտաղները նոյնպէս դատարկ հացի տոպրակը մէջքներին կապած կոտոշաւոր ու դմակաւոր հօտն առջեւն առած, մէկ ձախից ու մէկ աջից գաւազանների շարժումով հօտը քշում են առաջ, փոշու ամպ բարձրացնելով օդում, տէրերին յանձնելու համար, մեծ հօրեղբայրս՝ Ռատթէնը, փողոցի այդ բանուկ ժամանակ գամբիւղով մեր այգուց խաղող էր բերում տուն, փաղաքշանքով մի քանի հատիկ խաղողից դնում է բերանս, միայն դա եմ յիշում ու էլ ոչինչ, այդ խաղողի արեւահամ քաղցրութեան համն ու բոյրը քիմքիս է կպնում կարծես եւ դա դեռ մնում է յիշողութեանս մէջ, ոնց թէ հէնց նոր եմ ըմբոշխնում: Մենք գիւղում թէ՛ այգի ունէինք եւ թէ՛ պարտէզ, լուիկի առաջին մշակողը գիւղում պապաս է եղել, նա շատ սէր ունէր պարտիզբանութեան:

1947 թուականին տեղափոխուելով Թեհրան մի քանի վայրեր ծուարելուց յետոյ վերջապէս մեծ նեղութիւններով կայք ենք հաստատում Բեհշաղաբաղում մեր ձեռքով կառուցուած երկյարկանի տնում, մի քանի հատ սենեակներով, որովհետեւ շատուր էինք՝ մեծ պապ, մեծ մամ եւ հօրեղբայրներս միասին էինք ապրում: Ես հենց այդ փոքր տարիքում հիւանդ եւ նուազ էի, փորս էլ շարունակ ուռած, մինչեւ եօթ տարեկան հասակում էլ ապառուղջ էի, ողորմած հոգի դուկտ. Խաչատրեանն էր ինձ բուժում : Այն օրերին մենք այնքան էլ նիւթապէս ի վիճակի չէինք, պապաս որպէս գրեթէ կարող իմացող մէկը ազգային առաջնորդարանում էր աշխատանքի անցել, ծխական սուրքի գանձիչ էր, պապաս էր ինձ տանում բժշկի մօտ, բժշկի կլինիկան եւ բնակարանը մէկ տեղումն էր, բժիշկը հոյակապ մի անձնաւորութիւն էր եւ հմուտ իր մասնագիտութեան մէջ: Իմ ուռած փորս կասկածանք էր առաջացրել իր մօտ, որպէս խորհրդակցութիւն մի քանի բժիշկների ներկայութեամբ ինձ մերկ ու սկլոր լաւ քննում են եւ դեղեր նշանակում, արդիւնքում ես վերջնականապէս բուժուում եմ, ամէն ինչ արուում էր ձրիաբար: Ամէն անգամ որ մօտից դուրս էի գալիս բժշկի տիկինը գրպանս մոնպազ (քաղցրաւենիք) եւ դրամ էր լցնում: Այն օրերին բժիշկը որպէս « աստուած » էր ընդունում, բժշկի նկատմամբ հաւատքը եւ նրան հանդիպելն արդէն անհանդերձ բուժում էր, արդեօ՞ք, հիմա այսպիսի բժիշկներ կա՞ն, կը ճարուե՞ն, անշուշտ կան, սակայն քիչ են, տակաւին ապրում է այդ մարդկային ազնիւ ոգին, մաղթենք, որ շատանան:

Ծնուելուց ի վեր մազերս խուզուած չէր, երկարել եւ դարձել էր աղջկայ մազեր, մամաս մազերս հիւսում էր: Կարծեմ հինգ վեց տարեկան էի, մայրս ինչպէս որ ուխտ էր արել, որոշում է՝ ինձ տանի Շուրջկանի եկեղեցին եւ մազերս կտրի: Մայրս ինձ եւ Օննիկ եղբօրս միասին տանում է Փերիա գաւառի Շուրջկան գիւղի Ս. Բարսեղ եկեղեցին, ուր պահում էր Ս. Բարսեղ Կեսարացու ձեռագիր Աւետարանը արծաթէ զարդարուած կազմով Ծառուկեանների անմիջական հսկողութեան ներքոյ, որովհետեւ նրանց պապերի միջոցով էր Հայաստանից

ՎԱՐՔԱԳԻԾԻ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՈՒԿ ԾԵՍԱԿՆԵՐԸ ՈՐՈՆՔ ԿԸ ՓՉԱՅՆԵՆ ԿԵԱՆՔԴ

Դուռն կը նախանձիս, Ասիկա շատ տարածուած թերութիւնն է, նախանձի ծուղակին մէջ յայտնուելը շատ դժուարին է, անիկա կործանարար է: Կեանքդ կը սկսի դժոխքի նմանիլ, դուռն միայն վատը կը տեսնես ու կը դառնաս դժբախտ: Նախանձի ազդեցութեան տակ չյայտնուելու համար կարեւոր է յիշել, որ դուռն քու ներկադ պէտք է համեմատես միայն քո՛ւ անցեալիդ հետ:

Դուռն ես քու գլխաւոր մրցակիցդ ու դատաւորը, իսկ միւսները ուն կեանքը պէտք է քեզի համար չափանիշ ըլլայ: Դարձիր աւելի լաւ ու դուռն քեզի ուրիշներու հետ մի համեմատեր:

Դուռն ամէն ինչ սրտիդ շատ մօտ կ'ընդունիս, Այո՛, մենք բոլորս եսասէր ենք, ասիկա փաստ է: Առողջ եաստիութիւնը նոյնիսկ անհրաժեշտ է բոլորիս: Սակայն ամէն ինչ միայն սեփական անձին վերագրելը չիմարութիւնն է: Դուռն կ'ազատիս շատ խանգարումներէ ու տագնապներէ, եթէ հասկնաս, որ մարդիկ քեզ վիրաւորելու ու ստորացնելու նպատակ չունին, որ անոնց արտայայտութիւնները յաճախ քեզի առհասարակ չեն վերաբերիր: Պահպանէ սիրտդ ու մոռցիր ուրիշներուն ըսածներն ու կարծիքները, այդպէս քեզի համար շատ աւելի դժուարին պիտի ըլլայ ապրիլը:

Դուռն քեզ գոհի տեղ կը դնես, Բաւական է բողոքես: Շատ յաճախ մարդիկ իրենք կ'արգելակեն իրենք

զիրենք, մշտապէս անելով գոհ ըլլալու ու տառապանքներու զգացմունքները: Այն պահուն երբ հասկնաս, որ քու կեանքդ քու ձեռքերովդ մէջ է ու դուռն բաւականաչափ ուժ ունիս որեւէ իրավիճակ շտկելու համար, գործերը կը շտկուին: Վերահսկէ իրադարձութիւնները ու միջոցառումները, դուռն ամէն ինչ յաղթահարելու կարելիութիւն ունիս:

Դուռն կը կուտակես ցաւն ու կորուստները. Սորվիր մոռնալ անցեալը: Այն, ինչ եղած է, արդէն ոչ մէկ ազդեցութիւն ունի վրայ: Բաւական է յիշես տհաճ պահերը ու փորձիս բացասական իրադարձութիւնները, նորէն վերապրելով զանոնք:

Գնայ առաջ, այրելով չիշողութեան կամուրջները, այդպէս դուռն քեզ լիարժէք կը զգաս, դուռն աւելի շատ ուժ կ'ունենաս երջանիկ ներկայ կառուցելու համար:

Դուռն վատատես ես, Ամէն ինչ միայն վատ լոյսի ներքոյ տեսնելը իսկական պատիժ է: Այդ պարագային վատ բաները աւելի սարսափելի կը թուին, իսկ լուսաւոր բաները ալ աւելի կը սեւնան ու կը փչանան: Մարդոց համար տհաճ է գտնուիլ մէկուս կողքին, որ միայն թերութիւններ կը տեսնէ ամէն բանի մէջ:

Փոխէ մտածելակերպդ՝ դարձիր լաւատես: Արդիւնքը երկար չի տեւեր՝ լաւատեսութիւնը քեզի ուժ կու տայ, որ աւելի լաւ ու աւելի յաջողակ դառնաս:

ԿԻՆԵՐՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԸԼԼԱԼՈՒ ԵՐԵՔ ՏԱՐԱԾՈՒԿ ՊԱՏՃԱՌ

-Դուք առանձին էք, քանի որ կը տառապիք, նման աղջիկներ մեր շուրջը շատ են: Մէջքը կը ծռեն, յօնքերը կը կիտեն, պայտասկը թեւին տակ սեղմած կը քալեն մահապատիժի դատապարտուածներու նման: Անոնց հետ նոյնիսկ առանց խօսելու՝ կը հասկնաս, որ անոնք տխուր են ու յոգնած: Լարուած ու տառապալի դէմքի արտայայտութեան նոյնիսկ ամենահամակրելի աղջիկները կը դառնան խորոված խնձորի նման: Մեծ մասամբ այդ դէմքի արտայայտութեան պատճառը որեւէ հերթական յօրինուած տառապանքն է՝ կամ եղունգը կտրուած է, կամ ընկերուհին ամուսնացած է, կամ ալ առանց պատճառի՝ պարզապէս աստղագուշակը անյաշող էր: Տառապող աղջիկները շատ կը ձգտեն մաքուր յարաբերութիւններու, որպէսզի իրենց ընդունին այնպէս, ինչպէս որ են: Բայց կեանքի մէջ ինքնին շատ է կեղտը, ու եթէ դուռն չսորվիս նկատել լուսաւոր պահերը, այդպէս ալ կը մնաս միմեկ՝ նստած սենեակիդ մէկ անկիւնը:

Կան տղամարդիկ, որոնք կը փորձեն կոտորել այդ պատը, ու նոյնիսկ նման աղջկայ մէջ գտնել բազմաթիւ դրական յատկանիշներ: Բայց միեւնոյնն է անոնք կը բախին այդ անթափանց պատին, ու կը հասկնան, որ ատոր ետին ոչ մէկ դրական լիցք կայ եւ փնտռելը ի գուր է: Ի վերջոյ տղամարդիկ կեանքի մէջ աւելի կարեւոր գործեր ունին, քան աներեւոյթ բաներու համար պայքարելը:

-Դուք միմեկ էք, որովհետեւ չափէն աւելի բան կը պահանջէք. Ձեզի հետ ծանօթանալով՝ տղամարդիկ իրենք գիրենք ինքնաշարժ վարելու քննութիւն յանձնող կը զգան: Եբեմն կը շփուիս կնոջ

հետ ու կը զգաս, որ ան հիմա սեղանին պիտի դնէ իր պահանջներու ամբողջական ցանկը, որ դուռն չես գիտեր ինչու պարտաւոր ես կատարել: Միայն որովհետեւ ան գեղեցիկ է, կամ երկար ոտքեր ունի: Այո, այդ իսկ պատճառով տղամարդիկ հիմա աւելի բծախնդիր դարձած են ու խելահաս չեն ըլլար կիներու սլացիկ մարմիններով: Հրապուրուելով կնոջ արտաքինով, տղաքը այդուհանդերձ չեն ուզեր ըլլալ փորձառնէտ, որոնց դիմացկունութիւնը կը ստուգեն հնարաւորինս խիստ պայմաններու մէջ: Ե՛ւ սեփական ինքնաշարժ, ե՛ւ բնակարան ե՛ւ գեղեցիկ մկանոտ մարմին: Այսինքն ժամադրութիւնը կը վերածուի հարցազրոյցի, ուր աղջիկը կը հարցաքննէ տղամարդը, որպէսզի պարզէ արդեօք ան կարելիութիւն ունի՞ ապահովելու անոր լուսաւոր ապագան: Ամենագուարձալին այն է, որ եթէ առաջ ատիկա բնորոշ էր 30-ը անց կիներու, հիմա, սակայն, քսան տարեկաններն ալ այդ նոյն գիծի վրայ են: Համատարած շահամոլութիւն:

-Դուք միմեկ էք, որովհետեւ շատ կ'ուզէք ամուսնանալ. Ձեզի հետ մէկ ժամ շփուելէ ետք ձեր աչքերուն մէջ տղաքը կը նկատեն, թէ ինչպէս կը տեղափոխէք իրենց բնակարանի կահոյքը ու կը շխշիկացնէք խոհանոցի ամանները: Ապագան ժամանակէն շուտ ծրագրելը ոչ թէ ձանձրալի է, այլ նոյնիսկ վախցնող: Կիներ բոլոր ուժերով կը ձգտեն դարձնել հարիւր տոկոսով օրինաչափ՝ որպէսզի ոչինչով զիջին իրենց ընկերուհիներուն: Անոր հանձարեղ ծրագիրն է մասնեմատին մատանի դնելն ու հնարաւորինս արագ յիշանալը, որպէսզի

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՈՒՏԵԼ ԱՌԱՌՕՏԵԱՆ ՊԱՐԱՊ ՍՏԱՍՈՔՍԻՆ

Առաւօտը օրուան սկիզբն է, ու իրմէ կախեալ է, թէ ինչ ընթացք պիտի ունենայ ամբողջ օրը: Ուստի շատ կարեւոր է օրը սկսիլ ճիշդ նախաճաշով: Չէ՞ որ նախաճաշէն կախեալ է, թէ ինչպէս պիտի զգաք ամբողջ օրուան ընթացքին:

Բոլորս ալ վարժուած ենք առաւօտեան տարբեր ուտելիքներ ուտելու, սակայն քիչեր կը մտածեն, թէ որ ուտելիքները ժխտական ազդեցութիւն կ'ունենան մարմնին վրայ: Առաջին ուտելիքը շատ կարեւոր է, քանի որ պարապ ստամոքսին կ'ուղարկէք սնունդ, որ պէտք է ըլլայ սննդարար եւ, որ ամենակարեւորն է, չվնասէ առողջութեան:

Շատ ուտելիքներ, որոնք կը տեսնենք նախաճաշի սեղանին, ընդհանրապէս կարելի չէ ուտել պարապ ստամոքսին:

Այսպէս՝

1. Սիթրուսային միրգեր- անոնք ունին գերզգայնութիւն յառաջացնելու յատկութիւն: Նոյնիսկ, եթէ գերզգայուն չէք, առաւօտեան սիթրուսային միրգ ուտելը կրնայ յանգեցնել գերզգայնութեան նշաններու: Կարելի չէ այդպէս ծանրաբեռնել լեարդը: Պարապ ստամոքսին նարինջի հիւթ խմելը կրնայ կազերու յառաջացման պատճառ դառնալ:

2. Պանն- պաննը կը պարուռնակէ մեծ քանակութեամբ մակնեգիում, որ կը բարելաւ սրտի աշխատանքը: Սակայն պէտք է առաւօտեան արթննալէ անմիջապէս յետոյ պանն ուտել: Պարապ ստամոքսին կերած պաննը կրնայ խախտել մարմնի մէջ քալիումի եւ մակնեգիումի կշիռը: Այնպէս որ, մի

զարմանաք, եթէ առաւօտեան պանն ուտելէ յետոյ ամբողջ օրուան ընթացքին թուլութիւն զգաք:

3. Հում բանջարեղէն- առաւօտեան հում բանջարեղէն ուտելը նոյնպէս կրնայ կազերու յառաջացման պատճառ դառնալ: Ոնդիրը հում բանջարեղէնի թթուայնութիւնն է, որ կը վնասէ ստամոքսին պատերուն:

4. Մրգային մածուկ- ի հարկէ, եթէ առաւօտեան մրգային մածուկ ուտէք՝ չէք վնասեր ձեր մարմնին այնքան, որքան սիթրուսային միրգերու պարագային: Սակայն, դժուար թէ օգուտ ստանաք: Առաւօտեան մարմնին պէտք էն յաւելեալ մանրէներ:

5. Պաղ խմիչքներ- պաղ ջուրը ընդհանրապէս վատ կ'ազդէ մարտողութեան վրայ, այդ իսկ պատճառով կարելի չէ պաղ ջուր խմել ուտելու ընթացքին: Իսկ եթէ առաւօտեան պաղ ջուր խմէք, ուստի ստամոքսը դժուար թէ ուրախանայ: Ամբողջ օրուան ընթացքին պիտի դանդաղեցնէք սնունդի մարտողութիւնը:

6. Քաղցրաւենիք- շատ հնարաւոր է, որ այն մարդիկ, որոնք շաքարախտով կը տառապին, նախապէս առաւօտեան քաղցր բաներ ուտելու սովորութիւն ունեցած ըլլան: Ենթաստամոքսային գեղձը ի վիճակի չէ առաւօտեան բաւակաւնաչափ ինսուլին արտադրել, հետեւաբար՝ առաւօտեան քաղցրաւենիք ուտելը շատ վտանգաւոր է:

Ճիշդ կերէք, եւ ձեր ինքնագացողութիւնը ձեզ հաճելիօրէն պիտի զարմացնէ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ԻՆՉՊԵՍ ՇՓՈՒԻԼ ՏՅԱԾ ՍԱՐԴՈՑ ՅԵՏ

Երբ դուք կը գտնուիք իսկապէս լաւ մարդոց կողքին՝ ասիկա բնականաբար կը զգաք: Անոնք կը թուին թեթեւ եւ ջերմութիւն կը հաղորդեն իւրաքանչիւր իրավիճակի: Սակայն կան մարդիկ, որոնք լարուածութիւն կը ստեղծեն, եւ դուք կ'ուզէք արագօրէն ազատիլ անոնց ծանր, չերեւցող ճանկերէն:

Եթէ դուք բախիք կոպտութեան, ի հարկէ դժուարին է պատասխանել նոյն կերպով, բայց դուք բարեկիրթ եւ հասկցող մարդ էք: Ինչպէ՞ս վարուիլ, ինչպէ՞ս շփուիլ տհաճ մարդոց հետ՝ մնալով բարեկիրթութեան սահմաններուն մէջ: Բարեբախտաբար, հոգեբանները միշտ կը գտնեն եղանակը: Գոյութիւն ունի հիւսնային որակ՝ գիշողականութիւն: Անիկա կ'օգնէ մնալու բարեհամբօյր եւ համեստ:

Հոգեբանները կ'առաջարկեն չորս տարբերակ՝ այդպիսի մարդոց հետ շփուելու համար:

1. Գրգռուածութեան չպատասխանել գրգռուածութեամբ.

Դժուարին է պատասխանել նոյն կերպով եւ դժուար է մնալ բարեկիրթ: Բայց, եթէ դուք ջանք գործադրէք, հետեւաբար նոյնիսկ կրնաք բարութիւն տեսնել չար մարդուն մէջ:

2. Հարցուցէք դուք ձեզի, չէ՞ք

տղան արդէն փախչելու տարբերակ չունենայ: Տղաքը, սակայն, իրենց կեանքը կ'ուզեն անցնել այնպիսի կնոջ հետ, որուն հետ ամէն ինչ դժուարին է, որ գոնէ քիչ մը կանխատեսելի է, որ յառաջիկայ հնգամեակի համար ծրագրերն են չի կառու-

փոխանցեր արդեօք ձեր բացասական տրամադրութիւնը ուրիշներուն. Այլ խօսքով, հաւանաբար դուք վատ տրամադրութիւն ունիք, եթէ այդպէս է, կողքի մարդուն համար գոյութիւն ունի անմեղութեան կանխավարկած:

3. Զարաշահել՝ փորձելով ուրախացնել մարդը. Եթէ չարաշահէք՝ կրնաք մերժողական վերաբերմունքի արժանանալ կամ, առնուազն, կասկածներ յառաջացնել ձեր իրական նպատակներուն վերաբերեալ:

4. Ընդունիլ անխուսափելին, եթէ ասիկա, իրօք, անխուսափելի է. Դուք չէք կրնար փոխել ձեր հակառակորդը, բայց կրնաք փոխել ձեր վերաբերմունքը: Եթէ դուք կառավարէք դուք ձեզ, ուստի թոյլ չէք տար դիմացինին ձեզ հուսնէն հանելու կամ փչացնելու ձեր տրամադրութիւնը:

Հիանալի պիտի ըլլար, եթէ բոլորս ապրէինք խաղաղութեան մէջ ու շուրջբոլորը ըլլային բարեկիրթ մարդիկ, բայց մեր շրջապատին մէջ միշտ կան այնպիսիները, որոնք հաճելի չեն մեզի համար: Կարեւորը պէտք է կարենալ ճիշդ ձեռով շփուիլ այդպիսի մարդոց հետ՝ մնալով բարեկիրթ եւ վեհանք:

ցեր, այլ պարզապէս կը վայելէ իրենց համատեղ կեանքը: Անոր հետ, որուն համար կարեւոր չէ՝ ստան մտադիւր է ամուսնութեան առաջարկ ընել թէ ոչ: Կեանքը չափազանց կարճ է, որպէսզի փորձես զայն ամբողջովին ծրագրել:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԻՆՉ ԱՍՈՒՄ ԵՆ ՉԱՅ ԿԱՐՕ

Շարունակուած էջ 7-էն

մակերպում, ես եղել եմ նրա կողքին, ես եւ շատ այլ ղէմքեր եղել ենք Հրանդի հետ ու նրա կողքին, ապրել եմ մեր ազգային-հասարակական հարցերով, դժուարութիւններով: Հրանդի ջանքերը, քաջութիւնը եւ խիզախութիւնը օրինակելի էին ինձ համար. ես ինքս մեր համայնքի այս ճնշուած վիճակից գոհ եւ ուրախ չէի, մենք լուռ էինք եւ քաջութիւնը չունէինք մեր վիճակի եւ պայմանների մասին խօսելու, արտայայտուելու, մինչեւ որ Հրանդը իր օրինակելի ընթացքով մեզ տուեց այդ քաջութիւնը եւ խիզախութիւնը, որ կոտրենք լուռութիւնը...

Գիտես, Թուրքիայի այս հասարակութիւնը տարիներ տեղեակ չէր, որ հայեր են ապրում այս երկրում, որ մենք էլ այս հողում ենք եղել, այս երկրի մաս ենք կազմում, մարդիկ մեզանից հարցնում էին, որ դուք որտեղացի՞ էք, որտեղի՞ց էք եկել այս երկիրը... եւ նման հարցումներ... մեզ տարիներ այնպէս են դիտել, թէ դրսեցիներ ենք, որ ապրում ենք Թուրքիայում:

Մեր շրջապատը, մեր գործընկերները, հարեւանները, ընկերները տեղեկութիւն չունէին հասցութեան մասին: Հրանդ Տինքը քաջութիւնը ունէր այդ հարցերի մասին խօսելու եւ մեզ էլ փոխանցեց այդ քաջութիւնը, որ խօսենք, որ լուռ չմնանք, արտայայտուենք, թէ այո՛, այս երկրում եղել են հայեր, որ պատմութիւն են կերտել, որի ղէմ ոճիր է տեղի ունեցել, եւ այն, որ Թուրքիան պիտի առերեսուի իր անցեալի ու պատմութեան հետ...

* Յամայնքը ապրել է դառն օրեր

Ես աշխատանքի էի, երբ լսեցի Հրանդ Տինքի սպանութեան լուրը... Թողեցի աշխատանքս, եւ այլևս չվերադարձայ աշխատավայրս... արժէք չունէր փող վաստակել... բիզնես ունենալ, հարստութիւն հաւաքել... Իմ մեծ պապայի հայրը մեծահարուստ է եղել Մալաթիայում, Չարդի ժամանակ նրան սպաննեցին եւ յափշտակեցին նրա բոլոր ունեցուածքը, նման երեւոյթ պատահեց նաեւ հօրս պարագային՝ 40-ական թուականներին, չսպաննեցին նրան, բայց յափշտակեցին նրա պատմութիւնը լի է նման արարքներով՝ գործուած հայերի, յոյների եւ այլ փոքրամասնութիւնների պարագային... օրինակ՝ 70-80 թուականներում, երբ աշխարհի տարբեր կողմերում հայերի միջոցով մահափորձեր էին տեղի ունենում թուրք դիւանագէտների ղէմ, մենք այստեղ՝ Թուրքիայում սպառնալիքներ էինք ստանում թուրք ծայրայեղ ազգայնականների կողմից, ստորագրութիւն չունեցող նամակներ էին գալիս մեր տան դրանը, սպառնում էին մեզ... այդ թուականներին մեր համայնքից շատերը գաղթեցին արտասահման, պակսեց մեր համայնքի թիւը...

* Քաղաքական աշխարհ մուտք գործելու եւ ժժԿ-ն

Ես ինքս ինձ հետ մտածում էի՝ եթէ ուզում եմ վիճակ փոխել, պիտի լինեմ քաղաքական կեանքում, ես միշտ հովանաւորել եմ Պէ.Տէ.Փէ.(2)-ին, (քրտական նախկին կուսակցութիւն), ընտրութիւններում էլ միշտ նրանց էի քուէ տալիս, այդ կուսակցութեան եւ

քրտերի նկատմամբ մի տեսակ սրտակցութիւն էի զգում, նրանք էլ մեզ պէս տառապանքներ են կրել, նրանք էլ մեզ պէս իրենց ինքնութիւնը պահպանելու համար պայքարել ու պայքարում են. 2007-ին, Հրանդ Տինքի սպանութիւնից յետոյ սկսեցի աւելի մօտ համագործակցել այդ կուսակցութեան հետ: 2011-ի ընտրութիւններից յետոյ էր, որ այդ կուսակցութեան մէջ արծարծուեց այն հարցը, որ ընդդիմադիրները, բոլորը պիտի միանան եւ մէկ ընդհանուր կազմակերպութեամբ թուրքուհիները զոհողութիւնները միաձուլութեամբ ստանալու ներդրուածութիւն ունենան, ուստի հիմնեցինք ժողովուրդների ժողովրդավարական քոնկրետը(3), այդ քոնկրետում ներգրուուեցին մեծ թուով հասարակական եւ քաղաքական շարժումներ ու կազմակերպութիւններ եւ տարբեր համայնքների ներկայացուցիչներ, որոնք ոչ անպայման քաղաքական նպատակներ էին հետապնդում, այլ համարադրական եւ ժողովրդավարական արժէքների հետեւորդ էին, օրինակ՝ կանաչների խմբեր, ֆեմինիստներ, համայնքների ներկայացուցիչներ, ձախեր եւ այլն... այսպիսով սկսեցինք այս քոնկրետի աշխատանքները, եւ ես այդ քոնկրետի ղեկավար կազմի մէջ էի: 2013-ին մտածեցինք, որ անհրաժեշտ է, որ կուսակցութիւն ունենանք, հիմնեցինք ժժԿ-ն, ես ընտրուեցի այս կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ եւ այս տարուայ խորհրդարանական ընտրութիւններում էլ այդ կուսակցութեան կողմից թեկնածու ներկայացուցիչ Պոլսից եւ ընտրուեցի խորհրդարանում: 2015 թուականի Նոյեմբերի 1-ին, տեղի ունեցան Թուրքիայի 25-րդ խորհրդարանական ընտրութիւնները եւ ընտրուեց Հանրապետութեան 26-րդ խորհրդարանը: Այս շրջանի խորհրդարանում ընտրուել են երեք հայ պատգամաւոր՝ Տին. Սեւինա Տողան (ԺՂԿ) Պրն. Կարօ Փայլան (ԺԴԿ) Պրն. Մարգար Եսայեան (ԱԶԿ)

* Մեր կուսակցութեան (ժժԿ) յաջողութեան պատճառները

Մեր խօսքերը, մեր գաղափարները, մեր քննախօսութիւնը(4) մեր յաջողութիւնն էին, գոյութիւն ունեցող այս համակարգը, այս դրութիւնը, այս կերպ չի կարելի շարունակել, մենք քաջութիւնը ունեցել ենք խօսելու եւ արտայայտուելու շատ խնդիրների մասին, որ երեւի ամէնքը տեղեակ են, բայց չեն արտայայտուում: Մեր խօսքերի օրակարգի վրայ են շատ հարցեր, խնդիրներ, ինքնութիւններ... մեզ հետ են՝ կանաչները, ֆեմինիստները, էլճիպիթիները (տարբեր սեռային հակում ունեցողները), պահպանողականները, ալեւիները, այլ փոքրամասնութիւնները... մենք ժողովրդավարութեամբ ենք դիտում այս բոլորին, միաժամանակ մենք կողմնակից ենք, որ Թուրքիայի հասարակութիւնը պիտի ղէմ յանդիման գալ իր անցեալի հետ, Հայոց ցեղասպանութեան իրականութեան հետ, մենք արծարծեցինք Հայոց ցեղասպանութեան հարցը եւ դեռ պիտի խօսենք այս հարցի մասին. գտնում ենք, որ Թուրքիան պիտի ընդունի այդ ցեղասպանութիւնը եւ ներդրութիւն ինքի... մենք մեր արծարծած գաղափարների համար շատ հարուածներ ստացանք, իշխող կուսակցութիւնը եւ հանրապետութեան նախագահ էրտողանը մեր ղէմ են, նրանք միշտ բարձրա-

ձայն ասում էին, թէ այս կուսակցութիւնը (այսինքն մենք՝ ժժԿ) կողմնակից է այն հարցին, որ Թուրքիայում ցեղասպանութիւն է տեղի ունեցել հայերի ղէմ եւ ժողովրդին յորդորում էին, որ այդ պատրուակով մեզ քուէ չտան: Մենք նաեւ մտահոգ էինք, որ արդեօք հասարակութիւնը պատրաստ է ընդունել մեզ, հասարակութիւնը կարող է մարսել մեր խօսքերը, ընտրութիւնների արդիւնքը եւ քուէների բարձրանալը ապացուցեց, որ հասարակութիւնը մեզ հովանաւորում է, մենք ունենք կողմնակիցներ, ապացուցուեց, որ մեր մտքերն ու խօսքերը յաղթեցին. հասարակութիւնը պատրաստ է եւ գիտակից է եւ ընդունում է մեր գաղափարները, մենք այս յաղթանակից յետոյ աւելի քաջութիւն ձեռք բերեցինք մեր գաղափարների տարածման մէջ եւ սա մեզ համար շատ արժէքաւոր է:

* Իմ ծրագրերը որպէս պատգամաւոր

(Ժպտալով) գիտես, ինձ խորհրդարանում ասում են Հայ Կարօ, դա ունի թէ՛ լաւ կողմ եւ թէ՛ վատ կողմ, ես չեմ ուզում միայն ճանաչուեմ իմ ազգութեան՝ հայ լինելու համար. բայց քանի որ մենք որպէս հայ շատ դժուարութիւններ եւ խնդիրներ ունենք, թող լինի այդպէս, ինձ էլ ասեն Հայ Կարօ, բայց միաժամանակ նաեւ միւս փոքրամասնութիւններն էլ ունեն հարցեր եւ դժուարութիւններ, որոնց համար էլ իմ հերթին եւ հաւատարիմ իմ սկզբունքներին՝ լուծումներ պիտի փնտռեմ եւ չեմ ուզում, որ խորհրդարանում իմ մտքերն ու գաղափարները քննադատուեն իմ ազգութեան պատճառով... բայց ամէն պարագային իմ հիմնական գործերից խորհրդարանում լինելու է Հայոց ցեղասպանութեան արծարծման հարցը, դպրոցական դասագրքերում հայութեան հասցէին գրուած բացասական արտայայտութիւնների գեղջելը, ի հարկէ այդ բացասական նախադասութիւնների ջնջելը բաւական չէ միայն, պիտի գրուի, որ մենք այս երկրի պատմութեան մաս ենք եղել եւ գրուի նաեւ, որ եղել են այլ ազգութիւններ այս երկրում, որոնք դեռ են ունեցել երկրի պատմութեան կերտման մէջ եւ անտեսուել են, եւ այն, որ փոքրամասնութիւնները միշտ էլ անտեսուած են եղել եւ պիտի փոխուի այդ...

Թուրքիայի խորհրդարանական ընտրութիւններում թեկնածու են ներկայացնում կուսակցութիւնները, այս շրջանի ընտրութիւններին մասնակցութեամբ էին չորս գլխաւոր

կուսակցութիւններ՝ - «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւն (ԱԶԿ),

- «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւն (ԺՂԿ),

- «Ժողովուրդների ժողովրդավար» (Դեմոկրատիկ) կուսակցութիւն (ԺԴԿ),

- «Ազգային շարժում» կուսակցութիւն (ԱՇԿ):

Խորհրդարանը ունի 550 պատգամաւոր, այս շրջանի ընտրութիւններում (Նոյ. 1, 2015), ԱԶԿ-ն շահեց 317 տեղ, ԺՂԿ-ն 134 տեղ, ԺԴԿ-ն 59 տեղ, ԱՇԿ-ն 40 տեղ:

* Հայկական Սփիւռքը եւ մենք

Հայոց պատմութեան մէջ մենք միշտ խօսում ենք այն հարցի մասին, թէ թուրքերը ինչ ոճիրներ են գործել մեր ղէմ, ցեղասպանութիւն է եղել մեր ղէմ: Հիմա մենք

մեզանից հարց տանք, ուզո՞ւմ ենք այս խնդիրը լուծուի, թէ՞ ոչ: Մենք ինչքա՞ն են մինչեւ ե՞րբ պիտի շարունակենք այս ընթացքը: Իմ գնահատումով, այս հարցի լուծման վայրը Թուրքիայում է, այստեղ պիտի լուծուի այս հարցը: Աշխարհի բոլոր հայերը պիտի համագործակցեն Թուրքիայի հայերի հետ, պիտի կապեր հաստատուին դրսի հայերի եւ Թուրքիայի հասարակութեան հետ, պիտի այստեղ ներկայութիւն լինել, ծրագրել, համագործակցել, ծանօթանալու հարցերի ու իրականութիւններին հետ, այս տեղի ժողովուրդներին ու հասարակութեանը ցոյց տանք, թէ ի՞նչ է Հայոց ցեղասպանութեան ճանաչման առաւելութիւնն ու դրական կողմը: Թուրքիայում մեծամասնութիւնը չգիտի, թէ ի՞նչ է եղելութիւնը, տեղեակ չեն իրական անցեալից ու պատմութիւնից, պիտի բացատրենք, պիտի աշխատենք իրական հողի վրայ, աշխատել քայլ առ քայլ, հանգրուան առ հանգրուան՝ մինչեւ յաջողութիւն...

Պոլիս

1.- Ներկայում գտնուում է Թուրքիայի արեւելեան Անատոլիայի տարածաշրջանում, Մալաթիա նահանգի կենտրոնն է: Մալաթիան պատմական Փոքր Հայքի հնագոյն քաղաքներից է, Փոքր Հայքը եղել է հայ ժողովրդի ձեւաւորման շրջաններից՝ Արարատեան թագաւորութեան տարածքում, որը կոչուել է Մելետի. 11-րդ դարի սկզբներին գրաւուել է սելճուկ թուրքերի միջոցով, 16-րդ դարում գրաւուել է Օսմանեան կայսրութեան կողմից եւ մինչեւ Հայոց ցեղասպանութիւնը՝ քաղաքի բնակչութեան հիմնական մասը եղել են հայերը:

2.- BDP (Baris Ve Demokrasi Partisi), Թուրքիայում քրտամէտ կուսակցութիւն՝ խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն (ԽԺԿ) անուանով: ԽԺԿ-ն հիմնուել էր՝ 2008-ին, եւ ընդունուել էր Հայոց ցեղասպանութիւնը, եւ այն, որ Թուրքիայի իշխանութիւնն էլ պիտի պաշտօնապէս ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը: ԺժԿ-ի՝ այսինքն ժողովուրդների ժողովրդավարական կուսակցութեան հիմնումով ԽԺԿ-ի անդամները միացան այս նորաստեղծ կուսակցութեան եւ ԽԺԿ-ն լուծարուեց 2014-ին:

3.- Ժողովուրդների ժողովրդավարական քոնկրետ (ԺժԳ), քաղաքական շարժումների, կազմակերպութիւնների ու կուսակցութիւնների միութիւն է Թուրքիայում, հիմնուել է 2011-ին: Քոնկրետը իրեն համարում է ճնշուածների պաշտպան, ղէմ է ցեղային, ազգային, կրօնական, սեռային խտրականութիւնների: Քոնկրետին մաս են կազմում Թուրքիայի տարբեր ազգութիւնների կառույցներ՝ քրտեր, ալեւիներ, չերքէզներ, հայեր, ասորիներ եւ այլն... 2012-ի քոնկրետի ընդհանուր ժողովում հիմնուեց ժողովուրդների ժողովրդավարական կուսակցութիւնը ԺժԿ-ն կամ Հէ. Տէ. Փէ.-ն, որի ղեկավար կազմի մէջ է Կարօ Փայլանը:

4.- Քննախօսութիւն (Dis-course), իմաստների, արժէքների, գաղափարների եւ մեկնաբանութիւնների տարածող խօսքեր եւ լեզու, որի նպատակն է հասարակութեան մէջ հաստատել քաղաքական, բարոյական եւ մտաւոր առաջնութիւն եւ ինքնութիւն. քննախօսութիւնը խօսքային գործողութիւն է եւ հաղորդակցութեան գործընթաց:

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
Թէւ բաւական յուսահատեցուցիչ է երբ առաջարկներդ երբեմն կը մերժուին, սակայն այդ երբէք չի նշանակեր որ անոնք լաւը չեն: Գործի ասպարէզիդ մէջ կարելոր է որ պայմանները լրացնես յաջողելու համար: Ուշադրութիւնդ վերակենդանացուր առողջութեանդ վրայ: Բախտաւոր թիւերդ են՝ 10,15,16,25,26

ՅՈՒՆ Ապրիլ 20-Մայիս 20
Բոլոր կեանքդ փորձած ես արդար ըլլալ եւ բնաւ խտրականութիւն չես դնիր: Նիւթական բոլոր խոչընդոտներդ համբերութեամբ կը դիմագրաւես: Ծովային ճամբորդութիւն մը կը նախատեսես մօտ ապագային: Հանդիպում մը հին յիշատակներ պիտի արթնցնէ մէջդ: Բախտաւոր թիւերդ են՝ 4,18,22,30,35

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
Այս շաբթուայ ընթացքին ամենն յաջող իրագործումներդ պիտի կատարես եւ գործատիրոջդ գովասանքին պիտի արժանանաս: Շատ կարելոր էլոյք մը պիտի ունենաս ամբոխի մը առջեւ: Ուրիշներու կեանքը մի փորձեր սրբագրել: Բախտաւոր թիւերդ են՝ 9,10,18,24,29

ԽԵՑՊԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
Տրամադրութեանդ տակ ունիս աշխատողներ որոնք քու ցուցմունքներուդ կը սպասեն: Ժամանակդ հմտութեամբ գործածելու մի վատներ սուղ վայրկեանները: Սուտ գուշակութիւններու մի հաւատար: Օրուայ մէջ ընկելք գործերդ մի յետածգեր: Բախտաւոր թիւերդ են՝ 1,14,22,23,30

ԱՌԻԲԾ Յուլիս 23-Օգոստոս 22
Կը պատրաստուիս սիրելի մը դիմաւորելու որու երկար ատենն չես տեսած: Լաւ է որ ընտանիքդ առաջնահերթ տեղ կը գրաւէ կեանքիդ մէջ: Շատ հաւատարիմ եւ գաղտնապահ ըլլալուդ՝ ընկերներդ կը վստահին քեզի: Շատ հաւանական է որ փոքր գումար մը շահիս: Բախտաւոր թիւերդ են՝ 3,16,27,31,35

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Գործի պատեհութիւն մը պիտի ներկայանայ քեզի որը պէտք է օգտագործես ընդլայնելու եւ առաւել յաջողցնելու գործդ: Կողակիցիդ հետ անմիջական յարաբերութիւնդ մի կորսնցնէր անմիտ եւ անտեղի պատճառներով: Բախտաւոր թիւերդ են՝ 1,8,20,30,31

ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Ձբաղումներդ քեզ հեռու կը պահեն ընտանիքիդ հետ ժամանակ անցնելէ, եւ զաւակներդ վայելելէ: Պէտք է աւելի կարող ըլլաս զանազանելու մարդոց տարբեր բնաւորութիւնները եւ ըստ այնմ յարաբերութիւն կնքես անոնց հետ: Բախտաւոր թիւերդ են՝ 3,17,24,25,33

ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Երբ գործընկերդ քեզ չի կեցներ գործէ մը, այդ չի նշանակեր որ ըրածդ շիտակ է եւ պէտք է այդպէս շարունակես: Մտիկ ընող եղիր եւ հետեւէ լաւ խրատներուն՝ Ուժասպառ ըլլալու աստիճան պէտք է մարմնամարդ ընես եւ առողջ ըլլաս: Բախտաւոր թիւերդ են՝ 9,18,19,25,27

ԱՂԵՂՆԱԲՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Անկիւնադարձերով մի խաբեր բարեկամներդ, ուղիղ եղիր եւ ճշգրիտ: Արձակուրդի պէտք է երթաս որպէսզի թարմանաս եւ նոր եռանքով գործի վերադառնաս: Արկածի պարագային փորձէ հանդարտ ու ուժով մնալ եւ քաջութեամբ դիմագրաւէ պարագան: Բախտաւոր թիւերդ են՝ 14,19,27,29,34

ԱՅԾԵՂՋԻԻՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19
Անձնական փորձառութիւններդ չի սորվելով՝ նոյն սխալները կը կրկնես գործիդ մէջ: Կշտացուցած անձերուդ ներողամտութիւն խնդրելու մի վարանիր կարծելով թէ տկար նկարագրի անձ կը նկատուիս: Համերաշխութիւն ըրէ դրացիներուդ հետ: Բախտաւոր թիւերդ են՝ 15,18,24,27,34

ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
Նեղութիւններդ շուտով վերջ պիտի գտնեն եթէ քիչ մը աւելի համբերող ըլլաս: Ընտանեկան մեծ հաւաքոյթի մը ընթացքին՝ անակնկալ այցելու մը քեզ շատ պիտի հետաքրքրէ: Գերազանց բարի սիրտ մը ունիս եւ ծառայելը շատ կը սիրես, մի ձգեր որ օգտագործեն քեզ: Բախտաւոր թիւերդ են՝ 8,22,29,30,34

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Խիղճդ հանդարտեցնելու համար պէտք է դիմագրաւես այդ անձերը որոնց անուղղակիօրէն նեղացուցած ես: Բեռը շատ ծանր է, սակայն ուրախութեամբ եւ առանց գանգատելու կը տանիս զայն: Օղանաւային ճամբորդութենէ մի վախճար: Բախտաւոր թիւերդ են՝ 4,14,20,26,28

ԸՆԿ. ՅԱԿՈՒ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Մարտնակուած էջ-էն
աւելի քան որեւէ ժամանակ, Հայաստանի տարածքին եղող կուսակցութիւնները կոչուած են կարելոր դեր ստանձնել նոր համակարգին մէջ: Մեզի համար պատմական իմաստ ունեցող խորհրդարանական համակարգը այլընտրանք չունի պայմանաւ, որ խորհրդարան հասնին այնպիսի գործիչներ, որոնք զինուած են բարձր գիտակցութեամբ եւ կրնան ստանձնել ազգային եւ քաղաքական իրենց յանձնառութիւնները: Մեզի համար ինչպէս երէկ այսօր եւս Հայաստանը ապահով, զարգացող եւ բարեւոք երկիր մը դարձնելը սկզբունքային արժէքափէն է ու այդ առումով է, որ մեր գործունէութեան հիմնական առանցքին մէջ կարելոր տեղ պէտք է գրաւէ Հայաստանի մէջ տնտեսական գործառութիւններ իրականացանելու ծրագիրը:
Այս բոլորէն անդին հարկ է այստեղ չիշատակել Մեր Մեծ Նահատակները՝ Պոլսոյ Սուլթան Պայազէտ հրապարակին վրայ նահատակուած Քսան Հնչակեան հերոսները: Տարիներ կանցնին, կանցնին ժամանակներ բայց հերոսները եւ անձնուրացները կը մնան իրենց բարձր պատուանդանին վրայ: Այդպէս էին Հնչակեան Քսանները եւ այսօր աւելի քան որեւէ ժամանակ, անոնց մարդկային, ընկերվարական եւ գաղափարական հաւատաքը դարձած է ճանապարհի խթան ոչ միայն Մեզի հնչակեաններու համար այլ բոլոր անոնց, որ կը հաւատան ընկերային արդարութեան եւ մարդկային արժանապատուութեան պահպանման: Հնչակեան Քսանները ճիշդ է ծնան, գործեցին եւ մկրտեցան Հնչակեան կուսակցութեան գուրային մէջ բայց այսօր անոնք կը պատկանին ողջ մարդկութեան:
Յարգելի ներկաներ, Հայաստանը ապահով երկիր դարձնելը մեր բոլորին ճիշդ պէտք է դառնայ ու վստահ եղէք, որ մեր երկիրը հարուստող արտագաղթի ծանր ալիքը կարելի է կասեցնել միայն այն ատեն, երբ մեր երկրի պայմանները կը դառնան զբաւիչ ուր հայ մարդը կ'ապրի արժանապատիւ եւ իրեն վայել կեանք մը: Կարելոր է նաեւ ընկերային արդարութեան եւ Օլիկարխիայի վերացման գործընթացները պայմանաւ, որ այդ գարգացումները ըլլան առանց ցնցումներու եւ յաւելեալ տագնապներէ հեռու պահեն եւ ինչպէս նաեւ անոնց անոր ալ տնտեսական ծանր բեռնան տակ կըող հայ քաղաքացին:
Ինչպէս խօսքիս սկիզբը նշեցի այսօր հպարտութեամբ պէտք է արձանագրել, որ Յունաստանի հիւրընկալ այս ափերուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը կը մտնէ նոր հանգրուան մը:
Հանգրուան, որ իմաստաւորուած պէտք է ըլլայ կուսակցութեան շուրջ արդիական մտածողութեան եւ գիտակից կոչումներով ամրագրուած երիտասարդութեան մը մէկտեղումով:
Մեր կուսակցութիւնը գործի եւ հաւատքի կուսակցութիւն է: Անոր գոյութեան, անոր երթին եւ ճանապարհին իմաստները կը բխին համաժողովրդային պահանջներէ: Ու կարելոր է նաեւ, որ մենք դարաւոր մեր երթին առնթեր մենք չկորսնցուցինք մեր ուղղութիւնները եւ հաւատամքը:
Մեր հիմնադրման առաջին օրէն ընկերային արդարութիւնը, հարստահարեալ եւ ճնշուած մեր ազգակիցներուն պայքարը դարձաւ իւրաքանչիւր Հնչակեանի մտքին ու գործին հիմնական առանցքը: Եւ ի գուր չէ, որ այսօրուան 75 Միլիոն բնակչութիւն հաշուող Թուրքիոյ մէջ Փարամազի նման քաջարի առաջնորդներ կը պահեն իրենց այժմեականութիւնը:
Մենք տալիք ունինք մեր ժողովուրդին:
Տալիք ունինք Հայկական Սփիւռքին ու Տալիք ունինք Հայաստանին:
Այդ ոգիով գործեցինք երէկ ու այդ ոգիով պիտի գործենք այսօր ու վաղը:
Աթէնքի եւ տարբեր շրջաններու մէջ նոր փուլի մէջ մտնող մեր շարքը պէտք է պատրաստ ըլլայ վաղուան մարտահրաւէրներուն:
Ու վստահ ենք, որ մեր ընկերները 20ներու ոգիով ու նուիրումով պիտի շարունակեն իրենց երթը:
Կեցցե՛ն Հայ ժողովուրդն:
Կեցցե՛ն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը:
Կեցցե՛ն Ազատ Անկախ Ամբողջական Հայաստանը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Email: -----

ՍՓԻՒՔԻ ՆԵՐՈՒԺԸ Ի ՇԱՐԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ի ԵՐԱՅԻՄԻ

Շարունակում է 8-էն

տուրքերի կողմից իրականացվող քաղաքականության մասին, որից ղեկավարական ուղղությունները, գլխավոր հարցադրումներն ու խնդիրները:

Սփիւռքի նախարարը մասնավորապես ասաց,- «Ուզում եմ այս հրաշալի նախաձեռնությունների համար առանձնացնել շնորհակալություններ յայտնել ՄԱԿ-ի մասնակցի հիմնադրամի, Եւրոպական միության պատուիրակությանը, «Առաքելութիւն-Արեւելք» կազմակերպությունները, որոնց ջանքերի շնորհիւ սփիւռք ունեցող երկրների միջին կայանում է միջնաշխարհային երկրօսություն, ստեղծւում է փոխձանաչողություն, գիտելիքների ու հմտությունների, փորձի փոխանակման բացառիկ հարթակ, փոխադրված լինելու միջոցով միջավայր: Վստահ եմ, որ համաժողովը կ'ընթանա չակտիւ, կառուցողական քննարկումների եւ փորձի ստեղծագործական իրականացման, նորարարական ինելաիտ մոտեցումների զբաղւածում միջոցառում»:

«Համաշխարհային կամ տեղական մակարդակներում զարգացումը հնարավոր է առանց ներդրումների անելու, առանց մարդկային ռեսուրսների: Ներդրումները մասնակցի ծրագրերում լաւագոյն ճանապարհն են երկիրը, ինչպէս նաեւ ազգի ներուժը զարգացնելու համար: Սփիւռքահայերը եւ սփիւռքի կազմակերպությունները կարող են նշանակալի դեր ունենալ ցերեկային խնամքի կեդրոնների ստեղծման, խոցելի ընտանիքների համար նոր սոցիալական ծառայությունների տրամադրման, երեխաների աչքերի առողջագրւած ընտանեկան խնամքի ծառայությունների եւ ինտեգրուած սոցիալական ծառայությունների յետագայ զարգացման գործում,- ասաց ՄԱԿ-ի մասնակցի հիմնադրամի ներկայացուցիչ Տանիա Ռադոչայչիկ:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Յովակիմեանը՝ նշելով, որ Հայաստանի համար Սփիւռքի կողմից իրականացվող նախագծերը մեծ նշանակություն ունեն, վերջին տասնամեակում երկուստեք հսկայական ռեսուրսներ են ներդրել Հայաստան-Սփյուռք յարաբերությունները զարգացնելու եւ արդիւնաւէտ օգտագործելու համար:

ՏԵՐԱԿԱՆԱԿՆԵՐԸ 1915 Թ. ԱՆՈՒԱՆՈՒՄ ԵՆ

Շարունակում է 13-էն

անդադրաւանալու: Մօտ 100 տեղափոխված հայերի հարցադրույց ենք վերցրել, որոնք ներկայացնելու ենք երկրորդ գրքում: Տերսիմի տարբեր գիւղերում 1915 թ. եւ 1938 թ. թերթիկներից յետոյ այնտեղ մնալ նախընտրած հայերի զգալի մասը թէեւ չի մոռացել, որ ազգութեամբ հայ է, սակայն հաւատքի տեսանկիւնից յարում է ալեւինների կրօնին, հետեւում է ալեւինների ծիսակարգին: Նրանք կամ ալեւի զլպաշ աշիրեթների անդամ են, կամ էլ մօտ են կանգնած նրանց: Բնականաբար այս քայլին դիմել են ինքնապաշտպանություններից ելուստը: Տերսիմում աշիրեթների կառուցումը եւսականին յստակ է: Այնքան էլ հետո չէ Տերսիմում ապրել առանց որեւէ աշիրեթի կազմում լինելու կամ մօտ կանգնելու: Ահա այս մարդկանց բնորոշելու

Ձեկողներով հանդէս եկան ՄԱԿ-ի մասնակցի հիմնադրամի կողմից հրաւիրուած երկու միջազգային առաջատար փորձագետներ իռլանդական Diaspora Matters ընկերության ղեկավար Քինգսլի Այքինսը եւ ուաշինկթոնեան Migration Policy Institute-ի համահիմնադիր Քեթլին Նիւլթը:

Քինգսլի Այքինսը ներկայացրեց երկրի զարգացման գործընթացում սփիւռքի ներգրաւման իռլանդիայի բացառիկ ձեւաչափը, որը հնարավորութիւն է ընձեռում օգտագործել Սփիւռքի ներուժը տնտեսութեան եւ այլ ոլորտների զարգացման, աշխատատեղերի ստեղծման գործում:

Քեթլին Նիւլթը ներկայացրեց դրամական փոխանցումների հնարաւոր օգտագործման տարբեր եղանակները՝ ուղղուած երեխաների բարեկեցութեանը, այդ թւում՝ ուղղակի ֆինանսաւորումը, ֆինանսական գործիքների եւ ծառայությունների կիրառումը եւ սոցիալական ցանցերի օգտագործումը:

Բանախօսները պատասխանեցին համաժողովի մասնակիցների հարցերին, այնուհետեւ տեղի ունեցաւ քննարկում եւ մտքերի փոխանակություն:

Ամփոփիչ խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը:

Այցի շրջանակներում, Փետրուարի 2-ին Քինգսլի Այքինսը սփիւռքի ներգրաւման ռազմավարութիւնների վերաբերեալ դասախոսութիւն էր կարդացել ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի համար: Թեմատիկ քննարկումներ են անց կացուել նաեւ Հայաստանի Կենտրոնական բանկի Ուսուցման եւ հետազոտական կենտրոնի անդամների եւ երկրում գործող մի շարք այլ շահագրգիռ կողմերի համար:

Բանախօսների այցը կազմակերպուած էր ի շարունակութիւն 2015 թ. Հոկտեմբերին հայաստանյան պատուիրակութեան այցի իռլանդիա, որի նպատակն էր ուսումնասիրել սփիւռքի ներգրաւման իռլանդական փորձը: Մասնակիցները քննարկեցին սփուռքի եւ միգրանտների՝ Հայաստանում սոցիալական ոլորտի զարգացմանը եւ առաւել խոցելի երեխաներին ու ընտանիքներին աջակցելու ներուժը՝ երեխաներին առնչուող բարեփոխումների ոլորտում:

Համար էլ օգտագործում ենք «ալեւի հայ» հասկացութիւնը:

Այս հասկացութեան դէմ որեւէ առարկութիւն կա՞ չ: Այո՛, կայ: Գոյութիւն ունի մի ընկալում, համաձայն որի՝ հայը անպայման պէտք է քրիստոնեայ լինի: Մինչդեռ հայկականութիւնը էթնիկ ինքնութիւն է: Իրենց ալեւի հայ բնորոշողները եւս ասում են. «Իրենց սուննի, ալեւի կամ քրիստոնեայ բնորոշող թուրքեր եւս կան, ինչո՞ւ ալեւի հայ չլինի»:

Բայց այս մարդիկ իրենց կամքով չեն ընտրել «ալեւի հայ» լինելը...

Այո՛, բայց չպէտք է մոռանալ, որ իւրաքանչիւր հաւատք կարող է գոյութիւն ունենալ լոկ իր հաստատություններով: Եթէ Դուք եկեղեցի, քահանայ, վանք չունէք, ինչպէ՞ս կարող էք պահել Ձեր հաւատքը... «Երբ Արմենակ Բաբբըրը եկաւ Տերսիմ, մեզ լոյս բերեց»: Ալեւինների տեսանկիւնից իրավիճակն ինչպի-

Շարունակում է 15-էն

բերուել Աւետարանը, որը կոչուում էր նաեւ՝ «Կարմիր Աւետարան»: Էն օրերին Թեհրանից մեքենայով 10-15 ժամ հեռու էր Շուրշկանը: Ճանապարհից մէկ բան է մնացել իմ յուշատախտակում, այն որ ճամբի մէկ մասը պէտք է էշով գնայինք, գառնիվերը բարձրանալիս ես էշի վրայից շուռ եկայ եւ մէջքով կպայ գետնին, բարեբախտաբար ոչ մի մարմնական վնաս չպատահեց, միայն զրպանումս եղած հինգ դաւանոց արծաթէ դրամը կորցուեց: Չեմ յիշում մագերս ով կորեց եւ ինչպէս եղաւ: Այնուհետեւ զնում ենք Պապի Աղբիւրը Չուր խմելու եւ լուսացուելու: Շուրշկանցիների ասելով՝ հրաշագործ գորութիւն ունի այդ աղբիւրը, որը ստացել էր «Կարմիր Աւետարան»-ից այդտեղ պահուած լինելով: Պատմում են, թէ լուերը երբեմն յարձակուած էին գիւղի վրայ եւ գիւղացիներին կողոպտում էին, որպէսզի «Կարմիր Աւետարանը» չընկնի լուերի ձեռքը, զայն փաթաթելով մէջ, որ ջուր չծծի, եւ պաղտնի տանում են Պապի Աղբիւրի հովանի ծառի ջրին յարակից գետինը միընդուն շէնքում պահուելու, յետոյ որ դուրս են բերում այնտեղից, Աւետարանը մնացել էր անվթար: Աւետարանի այդտեղ մնալը պատճառ է դառնում հրաշագործութիւնների, համր երեխայ, չբեր կանայք եւ հիւանդներ են բժշկուել հաւատքով այդ աղբիւրին ուխտի գնալով: Վաղուց գիւղը պարպուած է հայութիւնից, եկեղեցին դադարել է եկեղեցի լինելուց, սակայն կայ եւ գոյատեւում է այդ աղբիւրը խնամքով պահպանուած, դարձեալ մնալով նոյն հաւատալիք ուխտատեղին: Եկեղեցու գանգերը Աւետարանի հետ միասին Մատթէոս Ծառուկեանի եւ Աբդալ Ստեփանեանի միջոցաւ 1973 թուականին յանձնուած են Մատենադարանին:

Մամաս, ես եւ եղբայրս Շուրշկանից տուն վերադարձին, տեսնում ենք Բեհշաթաբադը պաշարուած է գիւնդակներով, փողոցներում եւ տների կտուրների վրայ գինուորներ էին կանգնած, նրանք մէկ-մէկ տները խուզարկում էին կոմիստական զրականութիւն եւ հրատարակութիւններ փնտրելով: Եղածը՝ ջիւաղ Ստալինի եւ այլոց նկարները եւ հրատարակութիւնները վառւում կամ անհետանում էին անեցիների կողմից խուզարկողների ճանկը չընկնելու համար: Մեր հօրեղբոր Սեդրակին ձեռքակալում բանդ են տանում, նրանից մի ռադիօ-հարդըրիչ սարքաւորում գտնելով իբր թէ գաղտնի կազմակերպութեան գործակալ է: Նրան մի քանի

սի՞ն է: Ալեւինները «ալեւի հայերին» օրինական համարու՞մ են:

Ալեւի տեսնելներին այս հարցն ուղղեցինք: Բազմաթիւ ալեւի տեսնելներ ասացին, որ նրանց ընդունում են, եւ նրանց հետ տեսնել-թալիփ (ալեւիների կրօնին բնորոշ կառուցուածք-«Ակունքի» խմբ.) յարաբերութեան մէջ են: Բնականաբար, առկայ են որոշակի խնդիրներ: Օրինակ՝ պատմականօրէն ալեւիներն ու հայերը իրար հետ չէին ամուսնանում: Սա ինդիկ էր հանդիսանում նաեւ «ալեւի հայերի» համար: Երկու կողմն էլ մէկը միւսի հետ ամուսնանալ չէր նախընտրում: Սակայն 1970-ական թթ. սկսած Տերսիմում, սոցիալիստական պայքարի զարգացման հետ մէկտեղ,

ամիս բանդարկելուց յետոյ ազատ են արձակուած: Բեհշաթաբադը գուտ մի հայաբնակ թաղամաս էր դարձել քաղաքի կենտրոնում, յաչս պետական այրերին լաւ չէր դիտում, ուստի նրանք նպատակ ունէին բնակչութիւնը ցրելու եւ Բեհշաթաբադը իր անհրապոյց համապատկերով անհայցնելու, նրանք դրա համար պատրուակ էին փնտրում, իբր թէ բնակչութիւնը կոմիստական խմորումներ ունի եւ այլ անհիմն պատրուակներով թաղամասը հիմայատակ հողին հաւասարեցրին, բնակչութիւնը ցրի ու ցան եղաւ, նրանցից մեծամասնութիւնը կենտրոնացաւ Մաջիդիէ եւ Նարմաք նորակառուց թաղամասերում:

Շուրջ վեց եօթը տարի ապրեցինք Բեհշաթաբադում, մեր մեծ պապ տէր Վարդանը այստեղ իր հոգին աւանդեց եւ ամփոփուեց Դուլթաբի հայկական գերեզմանատանում: Բեհշաթաբադից է սկսում իմ դպրոցական կեանքը, մինչեւ տարրական երրորդ դասարան, «Դանաչի» դպրոցն էի յաճախում, ապա Նարմաք փոխադրուելով ուսումնառւումս նախնաբնակ էի «Գուրչու-Դաւթան» դպրոցում: Նարմաքից մինչեւ դպրոց երկար ճանապարհ էր, հանրակառքով էինք դպրոց գնում:

Բեհշաթաբադից մենք տեղափոխուեցինք Նարմաք, նախ որպէս վարձու, հետագային ունեցանք մեր սեփական տունը, որի կառուցման համար ընտանիքով աշխատում էինք՝ հող էինք մաղում, ցելս էինք օգնում եւ այլն: Անգամներ մեր տունը ներքին դասաւորութեան տեսակետից փոփոխութեան ենթարկուեց, պատճառը դրամն էր, պապաս բաւական գումար չունէր, որ միանգամից ամէն ինչ անէր, վերջացնէր: Երբ պապային տնտեսած դրամը դառնում էր շօշափելի, անմիջապէս միտք էր անում տան մէջ փոփոխութիւն մտցնել, այս պատճառով մամաս միշտ նեղութեան մէջ էր, մաքրել, լալ եւ դասաւորել: Այն օրերին մեր պապային կողմից Ետտիթ նանը մեզ մօտ էր ապրում, նա կաթուած էր ստացել եւ աջ կողմը անզգայ էր, մամաս էր ինամում իրեն: Տիրուհի մեծ մամս հոգին աւանդեց Նարմաքում 1963 թ. կանին եւ հողին յանձնուեց Դուլթաբի հայոց գերեզմանատանը տէր հօր կողքին, ցաւօք ես ներկայ չէի մեծ մամայի թաղումին, այդ ժամանակ Անթիլիասի Դպրեվանքումն էի սովորում որպէս սան:

Նորիկը Փունէ սովորելիս առիթ է ունենում նաեւ կալկաթայի հայ մարդասիրական գիշերօթիկ դպրոցում հայոց լեզու դասաւանդել:

(Շարունակելի 1)

յաղթահարուեց նաեւ այս խնդիրը: Օրինակ՝ հարցազրույցի ժամանակ տերսիմցի մի հայ ասաց. «Երբ Արմենակ Բաբբըրը եկաւ Տերսիմ, մեզ լոյս բերեց: Եթէ նա չգար, մենք այստեղ չէինք կարող ապրել: Մեզ ճշոյող, մեզ օտարող աշիրեթների ճնշումները նուազեցին, երբ Արմենակ Բաբբըրը եկաւ Տերսիմ եւ սոցիալիստական պայքարը ու ժողովրդացրեց Տերսիմում: Ալեւի երեխաներն էլ յեղափոխական դարձան, մեր երեխաներն էլ...»: Կարծում եմ՝ այս արտայայտությունները համապատասխանում են պատմական ճշմարտութեանը: Տեսնում են, որ 1970-ականներից յետոյ աշիրեթների ճնշումները հայերի նկատմամբ գնալով նուազում են:

ԱՐԹՈՒՐ ԱՐԱՅԱՍԸ 7-ՐԴ ԱՆԳԱՄ ՅՈՂԱԿՈՒԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԼԱԲԱԳՈՅՆ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿ



Գերմանական «BoxSport» ամսագիրը երկրորդ տարին անընդմեջ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, միջին քաշային 2-րդ կարգում աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամին ճանաչել է Գերմանիայի լավագույն բռնցքամարտիկ:

«Երեք ախոյեանական տիտղոսների պաշտպանութիւն, Դեկտեմբերին Մերիի հետ պսակադրութիւն, եւ վերջապէս յաղթանակ «Տարուայ բռնցքամարտիկ» անուանակարգում: Այդպիսին էր 2015 թուականը Արթուր Աբրահամի համար», - գրում է յայտնի ամսագիրը:

Մասնագէտները եւ ընթերցողների միջեւ անցկացուած քուէարկութեան արդիւնքներով Արթուր Աբրահամը վաստակել է 1502 ձայն եւ բաւականին առաջ անցել Եուրգեն Բրեմերից եւ Վլադիմիր Կլիչկոյից: Նշենք, որ հայ բռնցքամարտիկն այդ տիտղոսին արժանանում է 7-րդ անգամ:

Ի դէպ, 2015 թուականի Գերմանիայի լավագույն կին բռնցքամարտիկ է ճանաչուել մեր հայրենակից Սիւզի Քենտիկեանը, իսկ սիրողական բռնցքամարտում՝ Արտիոմ Յարութիւնեանը, որը օլիմպիական խաղերի ուղեգիր է նուաճել այդ երկրի համար:

ՅԵՆՐԻԽ ՄԻԽՈՒՐԵԱՆՆ՝ ԱՄՍՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԶԱԲԱՔԱԿԱՆՈՒՄ

Դորտմունդի «Բորուսիայի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխոմարեանն ընդգրկուել է Գերմանիայի առաջնութեան Յունուարի խորհրդանշական հաւաքականում:

«Բորուսիան» ունի եւս չորս ներկայացուցիչ՝ պաշտպաններ Լուկաս Պրիչչեկ, Մատս Հուսթելս, կիսապաշտպան Իլկայ Գիւնդոգան եւ ենթաշարձակուող Մարկո Ռոյս: Հենրիխ Միխոմարեանը «Բորուսիայի» խաղացողներից ունի ամսուայ ամենաբարձր միջին գնահատականը՝ 8.4:

ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹԻԸ ԿՐՃԱՏՈՒԵԼ Է

Հարաւափրիկացի Տոկիո Սեկս-վալեն հանել է թեկնածութիւնը ՖԻՖԱ-ի նախագահի ընտրութիւնից՝ չստանալով Ափրիկայի ֆուտպոլային կոնֆեդերացիայի աջակցութիւնը, հաղորդում է cafonline-ը:

Կազմակերպութեան գործադիր կոմիտէն որոշել էր պաշտպանել Ասիայի ֆուտպոլային կոնֆեդերացիայի նախագահ շեյխ Սալման բին Իբրահիմ Ալ Խալիֆայի թեկնածութիւնը:

Աւելի ուշ Սեկսվալեն յայտարարել է, որ ցաւում է Ափրիկայի աջակցութիւնը չստանալու համար: Կոնֆեդերացիան խնդրել է նրան հանել թեկնածութիւնը, սակայն հարաւափրիկացին պաշտօնապէս դեռ ընտրարշաւի մէջ է:

Յիշեցնենք, որ եւրոպական երկրների ֆուտպոլային ֆեդերացիաները կ'աջակցեն Ուեյն Ռոնի-ի գլխաւոր քարտուղար Ջանի Ինֆանտինոյին:

ՖԻՖԱ-ի նախագահի ընտրութիւնը տեղի կ'ունենայ Փետրուարի 26-ին Յիւրիխում: Թեկնածուներն են նաեւ Յորդանանի արքայազն, ՖԻՖԱ-ի նախկին փոխնախագահ Ալի Ալ Հուսէյնը եւ ՖԻՖԱ-ի գլխաւոր քարտուղարի նախկին տեղակալ Ժերոմ Շամպանը:



ՖԻՖԱ-Ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՆ ԶՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՈՐ ԱՐԻՄԱԿԸ

Հայաստանի ազգային հաւաքականի աղիւսակում կայ 285 միաւոր: Մեր ընտրանին նահանջել է եւս 2 հորիզոնականով ու 123-րդն է:

- Պելզիա-1494 միաւոր
- Արժենտինա-1455
- Սպանիա-1370
- Գերմանիա-1347
- Չիլի-1293
- Պրագիլիա-1251
- Փորթուգալիա-1219
- Գոլոմպիա-1211
- Անգլիա-1106
- Աւստրիա-1091
- 123 Հայաստան-285



ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Զ.Մ.Մ.Ի ՆՈՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Հ.Մ.Մ.Ի Փասատինայի ֆուտպոլի խումբը վերջին ամիսներուն նորանոր յաջողութիւններ սկսաւ արձանագրել: Արդարեւ Յունուարի 24-ի երեկոյեան փայլուն խաղարկութիւն մը ցոյց տուաւ որն աւարտեց 5-1 արդիւնքով, ընդդէմ «Փինք Պարոն Կրէյի»: Օշինն իր հոյակապ խաղարկութեամբ կրցաւ երեք աւիթներով իր դարպասապահի պաշտօնը լավագէս կատարել, հակառակորդի գնդակը վտանգաւոր խոյանքներէն զերծ պահելով:

Լիւզան շատ գեղեցիկ կերպով դնդակի խոփանցում մը կատարեց Ալէքսին, որ իր հերթին վերածեց կոլի: Ալէքսը նաեւ վերահսկելով գնդակին գլուխի գեղեցիկ հարուածով զայն հրեց դարպասէն ներս:

Յունուարի 31-ին հակառակ հովին ու անձրեւին ու այդ պաղ եւ աննպաստ եղանակին, Հ.Մ.Մ.Ի ֆուտպոլիստները 2-1 արդիւնքով պարտութեան մատնեցին «Մէնշն Փիքչըրը» խումբը: Արդարեւ Փասատինայի Վիլլա Բարք խաղավայրին մէջ կայացած այս մրցումին դարձեալ փայլեցան Ռաֆֆին եւ Լիւզան, մէկական կոլ խփելով հակառակորդի դարպասէն ներս:

Նորանոր յաջողութիւններ Հ.Մ.Մ.Ի-ին:

ԼԵՍԹԵՐԸ ՅԱՂԹԵՑ ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻՒՆ ԵՒ ԱՄՐԱՊՆԴՈՒԵՑ ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԻՐՔՈՒՄ

Անգլիայի առաջնութեան 25-րդ տուրի կեդրոնական խաղում հանդիպել էին մրցաշարային աղիւսակի զագաթին գտնուող թիմերը. «Լեսթերը» հիւրընկալուելիս 3 գնդակ է ուղարկել «Մանչեսթեր Սիթիի» դարպասը, իսկ մրցակցին թոյլ է տուել աչքի ընկնել միայն մէկ անգամ:



Դուբլի հեղինակ է դարձել գերմանացի պաշտպան Ռոբերտ Հուսթը, մէկ անգամ աչքի է ընկել ալթիբի կիսապաշտպան Ռիչարդ Մահրեզը: «Քաղաքայինների» կազմում խաղաւարտի մօտ միակ կոլը հեղինակել է Սերխիո Ագուերոն:

Այս յաղթանակի շնորհիւ Կլաուդիո Ռանչերիի թիմը վաստակել է 53 միաւոր եւ միանձնեաց ընթանում է մրցաշարային աղիւսակի առաջին տեղում, իսկ մանչեսթերցիները 47 միաւորով երկրորդն են:

ՆԵՅՄԱՐԻ ԶԱՄԱՐ 190 ՄԻԼԻՈՆ ԵՐՈ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԸ»

«Բարսելոնայի» եւ Բրագիլիայի հաւաքականի յարձակուող Նեյմարի հայրը յայտարարել է, որ որդու տրանսֆերի համար 190 միլիոն եւրօ առաջարկած աւելումը եղել է անգլիական «Մանչեսթեր Եունայթեդը»:



Ֆուտպոլիստի պայմանագրով հենց այդքան է նրա տրանսֆերի գինը, եւ խաղացողի ցանկութեան դէպքում, աւելումը պարտաւոր է թոյլատրել տեղափոխութիւնը:

«Որդուս պայմանագիրը «Բարսելոնայի» հետ աւարտուում է երկու տարի չեւոյց, բայց դուք կարող էք հանգիստ լինել, նա երջանիկ է այստեղ», - ասել է Նեյմար աւագը:

Նեյմարի հայրը 190 միլիոն եւրօ առաջարկած աւելումի մասին ստիպուած էր եղել պատմել Մադրիդի դատարանում՝ «Բարսելոնայի» կողմից որդու տրանսֆերի ձեւակերպման ժամանակ ֆինանսական մեքենայութիւնների վերաբերեալ դատավարութեան ժամանակ:

Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում Նեյմարը 18 հանդիպումներում խփել է 16 կոլ, կատարել է 11 կոլային փոխանցում: